

البنجرادو

محلّة جمعيّة القاهرة الحيريّة الأرمينية العامّة

ՏԵՂԵԿԱՏՈՒ


ՏՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՏԻՐԷԻ Շ.Բ.ՄԻՈՒԹԵՆԸ

المدير المسئول ا. صاروخان — ١٥ شارع عماد الدين — تليفون ٥٥٦٣٦

Ե. Տ Ա Ր Ի

Թ Ի Ի — 5

1961



Հոգեւոյս Տ. ԳԱՐԵԳՈՒՆ ԱՐՔ. ԽԱԶՍՏՈՒՐԵԱՆ
 (Լուսանկար՝ 1922, Տրապիզոն), ոտի՛ ուսուցիչ՝ Գուրգէն Վարդանեան: (անթիպ)

Ա. գ. դ.

- Տեղեկատուն առ այժմ կը հրատարակուի երկու ամիսը անգամ մը.
- Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, թերթերու և հանդէսներու առաքումները կատարել խմբագրութեանս հասցէին՝

Խմբագրութիւն Տեղեկատուի

15, Էմատ էլ Տին փողոց

Նամակատուի 717, Գահիրէ — Հեռախօս 55636

Rédaction Déghégaou

15, Rue Emad El Dine

B.P. 717, — Le Caire — R. A. U.



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայ եկեղեցւոյ Սուգը		Էջ 1
Մեր Աստուածները	Գարեգին Եպս. Տրապիզոնի	2
Մկրտիչ Մարկոսոֆ Պէյ	Ա. Ալպոյանեան	4
Բարեգործականը Հիւս Ամերիկայի մէջ		5
Հ.Բ.Ը. Միութեան Կեանքն ու Գործը — Կտակներ		7
Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան կեանքէն		12
Տիկին Չարուհի Ծաղկունիի Մահը	* *	15
Մեր Քաղցրաբառ Հայոց Լեզուն	Նաիրի Չարեան	15
Սփիւռքահայ Կեանքէն		17
Վ. Մալէգեանի 90 ամեակին առթիւ		17
Հայրենի Աշխարհ		20
Վարդատետր		

التبليغ

مجلة جمعية القاهرة الخيرية الأرمينية العامة

ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՏՆՈՒՄԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵԱՆ

المدير المسئول ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين - تليفون ٥٥٦٣٦

Ե . Տ Ա Ր Ի

Թ Ի Ի — 5

1961

Խմբագրական

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՈՒԳՐ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին յանձին Կ. Պոլսոյ Պատրիարք Գարեգին Ալք Խաչատուրեանի, կորսնցոյց իր ամենափայլուն արժէքներէն մին ալ, անփոխարինելի արժէք մը, որ ո՛չ միայն մեծ կշիռ ունէր որպէս եկեղեցական ակնածելի դէմք, այլ եւ, իր գրական լայն պաշարովը, հմտութեամբը, լեզուագիտութեամբն ու գործունէութեան անսպառ կորովովը, յարգանք, հիացում եւ պատկառանք կը ներշնչէր բոլորին:

Հանգուցեալ Պատրիարքը հաւատարիմ աւանդապահն էր մեր ազգային եւ կրօնական սրբութեանց եւ անխարդախ պահակը մեր ազգային միասնականութեան, ճիւղաւորութեամբ Ս. Էջմիածնի Վեհափառ Գահակալին: Անշեղ հետեւող իր այս ամրակուռ հաւատքին, Ան, Սփիւռքի ամէն կողմը, Յրանսայէն մինչեւ Գալիֆորնիա, մինչեւ Արժանթին եւ մինչեւ Կ. Պոլիս մնաց վսեմ ջահակիրը իր այդ գաղափարականին եւ Էջմիածինով միայն կարելի համարեց Հայ Միասնականութիւնը եւ աշխարհածրիւ հայութեան ազգային ոգիին պահպանութիւնը արտասահմանի մէջ:

Ո՛չ միայն բարոյական բարձր արժա-

նիքներով եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնէի մը վայել խոնարհամտութեամբ, այլ եւ լուսապայծառ ըմբռնումներով օժտուած էր Նորին Ամենապատուութիւնը, ըմբռնումնե՛ր, որոնք Աւետարանի յաւերժական սկզբունքներէն քաղած էր, եւ որոնք կը ճոխանային հայ լեզուի, գրաբարի, գրական եւ բանասիրական ու լեզուագիտական իր հարուստ պաշարովը:

Աստուծոյ խօսքին քաջ եւ ոգեւորեալ քարոզիչն էր Ան: Ամէն Կիրակի, Պոլսոյ եկեղեցիներուն մէջ Իրեն կը հետեւէին հաւատացեալ բազմութիւններ, որոնց հոգին կը տոջորէր Տիրոջ խօսքին պապակովը: Եւ այդ բազմութիւնները լիովին յագեցած, կը մեկնէին Աստուծոյ Տունէն, դարձեալ վերադառնալու եւ լսելու Իր խօսք, Իր մեղրածոր ջրթներէն: Եւ այսպէս էր պարագան, ո՛չ միայն Պոլսոյ այլ աշխարհի ամէն կողմը, ուր գացած էր առաջնորդելու, հովուելու իր տարագիր զաւակները:

Բայց իր ճարտասանական, քարոզչական մեծ կոչումին կը միացնէր նաեւ գրչի մարդու իր մեծ կարողութիւնը: Քաջ գրաբարագէտ, աշխարհաբարի հիանալի թարգմանութեամբ լոյս ընծայած էր Նարեկ ինչպէս եւ Ս. Գիրքը: Զգայուն բանաստեղծ, Շնորհալիի շունչով օծուն, ահա՛ իր «Տարօնաշունչ»ը եւ «Աշխարհի Լոյսն ի Հայս» գոյգ հատորները, որոնք կը ցո-

ՄԵՐ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

Գրեց ԳՍՐԵԳՈՒՆ ԵՊԻՍ. ՏՐԱՊԻՉՈՆԻ
(ԽՍՁԱՏՈՒՐԵԱՆ)

«Ալէլուիա, ալէլուիա...»:

«Լճյս զուարթ սուրբ փառաց անմահի
Հօր...»:

Հայաստանեայց կիրակէմուտքի գերազանց քնարերգութիւնը: Խորհրդաշունչ ողջերթը շիջելափառ արեգակին, եւ բարի-զալուստի ցնծերգը այն միւս Արեգակին՝ օրուն լոյսն է տեսեր հոյ շինականը իր լեռներու բարձունքէն:

Երեսուններեք տարիներ շարունակ լսեր էի այդ լուսերգը, աւելի դաշն, աւելի կռու եւ աւելի խոր շեշտերով: Բայց Մուրատառուրի մթաստուեր կամարներուն տակ, ուր խունկի եւ կնդրուկի անուշահոտութիւններն ու մեղրափթիթ լուզուակներու լոյսերը քաղցր զգայնութեամբ մը հոգին կը վերացնեն, ան ունէր աւելի տպաւորիչ շունչ մը, ազդուութիւն մը, հակառակ ան-

հագագ երգուածքին՝ զոր ներշնչուածի աւելունէն զուրկ շրթներ կը թափթէին անփութօրէն: Թուլացած եւ թրթռուածի անընդունակ լարեր, որոնց վրալի զուր պիտի երթեւեկէին բնութեան մէջ թաքուն աստուածային մատեր, հնչեցնելու համար կրօններու - ներշնչումներու - չքնադագոյն երգը, երգերու երգը, «Լճյս զուարթ...»:

Կեանքի սիրահար հայն է կրկին, որ դարե՛ր, դարե՛ր շարունակ հիւսեր է փառքը լոյսին:

Լճյս, — տարերային թրթռումներու այդ հրայալի համադրութիւնը, սր գոյներու բիւր պէսպիսութիւններն է ասեղնագործեր, եւ Գեղեցկին ծնունդը ծաղկազարդեր: Երկնուղէչ բարաին, դիցամուտնչ սօսին, պատգամախօս կաղնին իրենց տերեւներու կանաչը, կռուստպիտ շուշանն իր սպիտակը, այգազեզ վարդն իր կարմիրը, արփածին երկինքն իր կապոյտը ծծեր են բոլոր այն ճառագայթներէն՝ որոնք հրազանգ զունդերէն են շողարձակուեր: Վե՛մաթաիչ արծիւն ու վեհաբաշ առիւծը, նուազերգու սոխակն ու սուլող սարեկը, բարի արագիւն ու բանբեր կռուկը իրենց բիրածիլ ծիածաններու ցանս:

լացնեն նաեւ Իր խանդավառ հայրենասէրի ջերմ զգացումները. Ահա նաեւ «Շողակաթ»ը՝ Պոլսոյ Ազգային Պատրիարքարանի Պաշտօնաթերթը, ճոխ եւ բովանդակալից ամսագիրը, որուն անխոնջ եւ յոգնավաստակ խմբագիրը Ինքն էր մինչեւ իր կեանքի վերջին րոպէն, ճիշտ մեր մեծանուն մատենագիրներուն նման, որոնք մեր անմատչելի լեռներուն ծոցը ծուարած վանքերուն խուցերուն մէջ, բարջ մը ջուրով եւ պատառիկ մը հացով մեծ խնամքով կ'ստեղծագործէին եւ յաճախ իրենց վերջին շունչը կը փչէին, գրիչը ձեռքերին, գլուխնին աշխատանքի սեղանին վրայ հակած...:

Տաթեւացիի, Օրմանեանի, Դուրեանի եւ այլ անմոռանալի եւ յաւէտ պանծալի եկեղեցական հայրերու շարքին, Գարեգին Արք. Խաչատուրեան եւս կը փայլի իր շինարարական վաստակովը: Ահա Սուրբ Խաչ դպրատունը, զոր ինք հիմնեց իր պատրիարքութեան շրջանին. Թուրքիոյ հոծ հայութեան համար հոգեւորականներ եւ կըր-

թական գործիչներ պատրաստելու ազնիւ, քրիստոնէական եւ հայրենասիրական նպատակով:

Ահա այսպիսի արժանաւոր եւ իր բազմատեսակ ծառայութիւններովը Հայաստանեայց եկեղեցիին պատիւ բերող մեծանուն եկեղեցականի մը անզնահատելի վաստակը մեծարելու համար էր որ Ազգիս Ընդհանրական Վեհափառ Հայրապետը հաճեցաւ անձամբ նախագահել Օծման եւ Թաղմանական հանդիսութեանց, որոնք կատարուեցան աննախընթաց շուքով, թըրքական մայրաքաղաքի մէջ, հարիւրհազուորներու մասնակցութեամբ:

Սմբագրութիւնս յաւիտենական հանգիստ կը մաղթէ մեծ Անհետացեալին յոգնաբեկ մարմինին եւ արժանաւոր յաջորդ մը՝ իր թափուր ձգած Պատրիարքական Գահուն: Յաջորդ մը որ զիտնայ Թրքահայ մեր եղբայրներու կրթական եւ հոգեւոր կեանքը առաջնորդել իմաստութեամբ եւ Հայաստանեայց եկեղեցւոյ ոգիին եւ նուիրական սկզբունքներուն համաձայն:

ցերն են հիւսեր լոյսի երփնագեղ նրբա-
չողերէն: Լոյսի ծածանքներով են բանա-
հիւսեր քնարն իր լարին սիրերգը, սրինգն
իր փողին հովուերգը. դաշնամուրն իր
ստեղնաշարին պարերգը՝ թրթռումը լոյսին,
ալիքը ձայնին միասնաբար թելադրիչ հո-
սանքը ծորելով հոգիի հոյզերուն և զմայ-
լանքին: Իսկ մա՛րդը, — օհ՛, խտացումը ա-
մէ՛ն բանի, ամէ՛ն բանի, ան իր տիեզե-
րական համերգն է եզանակեր բոլո՛ր բո-
լո՛ր ձայներէն, իր անպարագիծ համայնանը-
կարն է արուեստագործեր բոլո՛ր բոլո՛ր
լոյսերէն: Գերազանց կրօններ, ուր գործա-
րանաւոր թէ անգործարանաւոր աշխարհ-
ները հաւասարապէս ունին իրենց պաշտա-
մունքի բազինն ու Սրբութիւն սրբութեան-
ցը: Վասնզի տիեզերքն ամբողջ՝ աւելի
կամ պակաս չափով՝ մթերանոց մըն է լոյ-
սերու, որոնք Արեգ Աստուծոյ ակէն են
բխեր: Այդ լուսաբեր Ակն են պաշտեր մեր
պապերը, մեր պապերուն պապերը:

Շնորհարթիթ շրթունք մ'ալ է զայն
քնարերգեր. —

«Առաւօ՛տ լուսոյ,
Արեգա՛կն արգար,
Առ իս լոյ՛ս ծագեա՛...»

«Արեգակն արդար», որ Հայաստան աշ-
խարհի մէջ է ծագեր, և նահատակներու
արիւնի կարմիր ցոլքերով մեր սուրբ եկե-
ղեցիներն պայծառացուցեր:

«Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի
հօր...»

Անմահ Հայր մը կայ, ո՛վ կրնայ ու-
րանալ, որ կեանքը կ'ստեղծագործէ մշտն-
ջենապէս: Եւ այս՝ շնորհիւ այն անծանօթ
իմաստութեան, որ՝ կամքիներգօրութեամբ՝
լոյսի գիւտն է կատարեր: Ինչպէ՛ս եղեր
է այդ, — ո՛չ ոք գիտէ, և թերեւս ո՛չ ոք
պիտի գիտնայ երբեք: Միայն թէ կը տես-
նենք անոր սուրբ փառքը, երկնքի բերնով
պատմուած և երկրի ձայնակցութեամբ
դաշնեղբուած: Մեր պապերուն պապերը
չճանչցա՞ն այդ Հայրը. օրհնութեամբ շնուա-
գեցին այց փառքը:

Ի՞նչ փոյթ, սակայն, եթէ անոնք, մեր
պապերուն պապերը, պաշտեցին զԱյն Արա-
մազդի, Մեծիմաստ-Տիրոջ անունով: Օ՛,
արդարեւ մեծիմաստ, ա՛յնքան պզտիկ ըլլա-

լով մարդկային իմացականութեան և երե-
ւակայութեան թռիչքի թափը՝ վերասլա-
նալու դէպի սկիզբներու Սկիզբը, վախճան-
ներու Վախճանը: Չէ՞ որ անոնց թռուներն ալ
են երկրպագեր Անոր լուսադիւր Հօր-Աս-
տուծոյ անունով: Իրպէս Լուսադրիւր, ա՛յն-
քան լեցուած է Տիեզերքը, անհունապէս
փոքրէն մինչիւ անհունապէս մեծը, կենդա-
նութեան անսպառ լուսաթրթռումներով:

Ի՛նչ փոյթ եթէ անոնք, մեր պապե-
րուն պապերը. դիւցազներգեցին Անոր որ-
դին, Վահագնի՝ հրաբեւ զօրութեան՝ եղէդ-
նաբոց ծնունդին մէջ. —

«Երկնք երկին եւ երկիր,
Երկնք եւ ծիրանի ծով...
Ընդ եղեգան փող՝ բոց ելանք,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազեք:
Նա հուր հեռուներ, բոց ուներ մօրուս,
Եւ աչկուցն էին արեգակուցն...»:

Իսկապէս հրաբեր, ա՛յնքան անհրաժեշտ
է կրակը արութեան համար: Չէ՞ որ անոնց
թռուորդիներն են փառաբաներ զԱյն, Յի-
սուսի՝ կենսածառուածային Փրկչի՝ լեռնա-
ճաճ սնչ պայծառակերպութեան մէջ. —

«Գոհաբ վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփեցից,
Ի վեր ի վերայ վարսիցն՝
Պղպրջեւ ծաղիկ ծովային...»:

Ճշմարտապէս կենսաստուածային, ա՛յն-
քան երկնատեսիլ Արդարութիւնը, երկրա-
բոյս ճշմարտութեան հետ գիրկընդխառն,
մաքրագործուած է կեանքի կրակի և լոյսի
կիզուումներով...:

Արութեան Արեգի ակը՝ Վահագն, որ
արդարութիւնն է մեր պապերու Տիեզեր-
քին:

Արդարութեան Արեգի ակը՝ Յիսուս, որ
արութիւնն է մե՛ր Տիեզերքին:

Արդարութիւն և Արութիւն՝ իրենց կրակն
են առեր Արեգէն: Վերջինը՝ անով այրական
հրայրքը, հայրական եռանդն ու մայրական
սէրը արծարծելու սրտէ արուօսաններու մէջ,
առաջինը երգերը սրբութեամբ յարդարելու,
և մարդը օրհնութեամբ վարդավառելու, և
երկուքը մէկ՝ կեանքի աստուածային յա-
րութիւնը լուսացնելու: Եւ մտքի ի՛նչ հրա-
շաղի այլ բնական գիւտ Հայուն մօտ՝ որ

ՄԵՐ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԿՈՍՅՈՖ ՊԷՅ

1849—1919, Յուլիս 17

Գրեց Ա. Ա. ՊՅՍԱՆՅԱՆ

Հ. Բ. Ը. Միութեան հիմնադիրներուն մէջ առանձնայատուկ տեղ մը ունի Մկրտիչ Մարկոսոֆ Պէյ որ, գործօն մասնակցութիւն մը ունեցած է առաջին կեդրոնական վարչական ժողովին մէջ:

Մարկոսոֆ Պէյ Եգիպտոսի գաղութին տմէնէն զարգացած անձերէն մէկն էր, որ իր ազգային ոգին անեղծ պահած էր:

Ինք որդին էր Զմիւռնիացի Յովհաննէս Մարկոսոֆ վարժապետին (ծնեալ 1822ին) որ Թրիէսթէ հաստատուած էր, հաւանօրէն իրր ուսուցիչ Պետրոս Ամիրա Եռասուֆի զաւակներուն և ստացած էր աստրիական հպատակութիւն:

Պետրոս Եռասուֆեան եղբայրն էր Մոհամմէտ Ալիի խորհրդական և վարչապետ Պօղոս Պէյ Եռասուֆի (մեռած 1844ին) որ, Ալեքսանդրիոյ Ազգային հաստատութեանց մեծ բարերարը եղած է:

Կրցեր է մայր-գաղափարի հանգիստութիւնը, աօրալոյսի, հուր-լոյսի, էոյթը պահպանել բառերու այս գեղեցիկ յօրինուածութիւններուն մէջ՝ դարերու հոլովոյթով կերպարանափոխուած: Հուր-լոյսը չէ՞ որ կ'արարչազործէ կեանքը և կը յաւերժացնէ զայն:

Ահա թէ ինչո՞ւ մենք և մեր պապերը Մուրաթապետի սա խորհրդաւոր կամարներուն տակ, լուսաշող սեղանին առջեւ, ուր վաղը Գառը պիտի զենուի, կրնանք երգել Վերջի զուարթի օրհներգէն վերջ՝ յանուն արի Վահագնի և արդար Յիսուսի.—

«Սուրբ Աստուած, սուրբ և հզօր...»:

Եւ ո՞րքան ծարաւ է Հայաստան աշխարհ այս արութեան և արդարութեան:

Տեսէք, սակայն, ինչ բանի մէջ է այդ գերբնական Ոյժը՝ զոր աշխարհ երբեք ճանչցած ըլլայ.—

«Որ ծնա՞ր... որ խաչեցա՞ր... որ թաղեցա՞ր... որ յարեա՞ր...»:

Արեւելքէն արեւմուտք լուսեղէն զնացք մը՝ որ կեանքի երեք խորհուրդներէն կ'անց-

Մոհամմէտ Ալի, Պետրոս Եռասուֆի (Մն. Իզմիր 1773ին և մեռած 1846 Յուլիս 29ին), վստահած է Թրիէսթէի մէջ—ուր ան առեւտրական հաստատութիւն մը հիմնած էր—վաճառելու եգիպտական բերքեր, ինչպէս բամբակ, ցորեն, գարի, եւայլն, և փոխարէնը Եգիպտական բանակին պիտոյքները կը գնէր: Պետրոս՝ այս ամենքէն կը ստանար տասանորդ բաժին մը:

Պետրոս Եռասուֆ, Թրիէսթէի մէջ ճանչցուած էր Բիէն Ժողով անունով և ընթարձակ գործառնութիւններ ունէր, որոնք կը կատարէին հայ պաշտօնեաներ, որոնց մէջ կարեւոր տեղ կը զբաւէին վաղեմի առեւտրական Ապրօ ընտանիքին անդամները: Մասնաւորապէս Աբրահամ ա՛՛Սպրօ ընդհանուր վարիչն էր այդ մեծ վաճառականական տան, որ Պետրոս Եռասուֆի մահէն ետք ան կառավարեց:

Այնպէս որ, 1810ական թուականներուն Թրիէսթէի մէջ բաւական մեծ թիւով հայեր կային որոնց զաւակներու ուսուցիչը եղած է Յովհաննէս Մարկոսոֆ:

Պետրոս Եռասուֆ, ուսումնասէր հայ մը, հաւանօրէն անտարբեր չէ եղած այդ հայերուն դաստիարակութեան, վասնզի,

նի, յանգելու համար վստահանի մը յաղթական: Հզօր ոչինչ կայ աշխարհի վրայ, թէ իսկ աստուածային ըլլայ ան, որ իր ծնունդը, շարչարանքն ու մահը չունենայ: Միայն թէ ինչ որ հզօր է իրապէս և իրաւունքով, զօռեպնդուած արդարութեամբ և օժուած սրբութեամբ.— նա կը յառնէ՛, կեանքի կեանք անմահութեան անուշահոտութեամբ խնկուած...—

«Սուրբ և անմահ, որ խաչեցա՞ր վասն մեր...»:

Եւ Հայը պիտի կրնար աւելցնել.—

«Եւ մեք վասն քօ՛...»:

Եանուն շարչարուած Արդարութեան և խաչուած Իրաւունքին նահատակուող ժողովաւորը, մարտիրոս Յեղը, պիտի կրնար երգել այսպէս: Եւ իրաւ որ այսպէս ալ կ'երգէր՝ կը կարծէի՝ Տարօնցի ուխտաւորը այդ իրիկուն կիրակէմուտքի «սուրբ Աստուած»ի նուագածութեան հետ ձայնակից:

ինչպէս կը տեսնուի, ան եզած է այն բարերարներէն որոնք՝ հին աւանդամուր քարեպաշտներու պէս եկեղեցի շինելու տեղ՝ Ազգին ուրիշ պէտքերը լրացնելու աշխատած են:

Արդարեւ նշանակելի է որ, Պետրոս Եւսուսեֆեան տպարան մը նուիրած էր Երուսաղէմի Հայոց Վանքին (1834) և ուրիշ տպարան մը՝ իր ծննդավայրին Մեսրոպեան Վարժարանին (1840), ինչպէս նաեւ կտակած 2000 ֆիօրին նոյն վարժարանին, 10000 ֆիօրին Իզմիրի Աղջկանց Հոփսիմեան, դպրոցին և 10000 ֆիօրէն Իզմիրի հայկական հիւանդանոցին:

Յովհաննէս Մարկոսօֆ, հաւանօրէն Պետ-



րոս Եւսուսեֆի մահէն ետք (1846) կամ անոր գործը շարունակող Աբրահամ տ'Ապրօի գործէն քաշուելէն (1858) ետք գաղթած է Ալեքսանդրիայ, ուր կը գտնենք զինք, յիշուած իբր բնակիչ նոյն քաղաքին 1864 ին հայոց մարդահամարի տեսնու:

Մահամմէտ Ալի Փաշայի մահէն ետք (1854) ընդգրկուած ուղղութեան և կատարուած նոր կարգադրութեանց հետեւանքով այլեւս Պետրոս Եւսուսեֆի առեւտրական տունը անշքացաւ, և Թրիէսթէի հայ գաղութը նախկին վիճակը չկրցաւ շարունակել:

Յովհաննէս Մարկոսօֆ, որ ամուսնացած էր Նուպար Փաշայի քրոջ հետ, եկաւ Եգիպտոս և Սայիտ Փաշայի Ստիւական շրջանին (1854-1868) 1855ին Եւրոպա-

ԲԱՐԵԳՈՐԾԱԿՈՆԸ ՀԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

«Վարդանանքը»-Հեռուստացոյցի-վրայ-

Փետրուար 5ին, Կիրակի առաւօտեան ժամը 10—10.30 Սի, Պի, Էս (Բոլոմպիա Պրոտէսթիանկ Բորփորէյլըն) հեռուստացոյցին վրայ տրուեցաւ «Վարդանանքը», զոր թատերախաղի վերածած էր Առաջնորդարանի Հանրային Յարարեութեանց վարիչ պր. Պետրոս Նորհատ, Եղիշէի «Վարդանանց Պատմութիւն»ը դասական գործին հիման վրայ: Բեմադրութիւնը կատարուեցաւ Վարդանանց տօնին առթիւ, Սի, պի, էսի յայտագրին վրայ, որ ամէն Կիրակի, նոյն ժամուէն կը հրամցուի Ամերիկայի մէկ ծայրէն միւսը:

Օրուան դերասանները, բոլորն ալ օտար, մաս կը կազմէին վերսոյիցեալ ընկերութեան թատերական անձնակազմին: Պէտք է ըսել թէ անոնք յաջողապէս պատ-

դրկուած ուսանողներուն հետ Բարիզ զրկած է իր երկու զուակները. երէցը՝ բժշկութեան և կրտսերը՝ Մկրտիչ Մարկոսօֆ հետեւեցաւ ճարտարապետութեան (1855-1861):

1865ին երբ Նուպար Փաշա ստանձնեց Հանրօրուտ Շինութեանց նախարարութիւնը միեւնոյն ատեն վարելով Երկաթուղիներու Տնօրէնութեան պաշտօնը, այդ նախարարութեան մէջ պաշտօնի կոչեց Մկրտիչ Մարկոսօֆը, որ իր խղճամիտ պաշտօնավարութեամբ արժանացաւ գնահատութեան և շատ կանուխէն Պէյութեան աստիճանով պատուուեցաւ:

Մարկոսօֆ Պէյ որ զգետնուեցաւ իր ենթարկուած տաժանելի հիւանդութեան հետեւանքով, խոր սուգի մատնեց ոչ միայն իր բարեկամները ու գործակիցները՝ այլեւ այն անթիւ բարերարեալները որոնք օգտուած էին այս ազնուական, մարդասէր, աչքը գոց և ձեռքը բաց Հայէն որ կ'ընդառաջէր բարեգործական բազմաթիւ դիմումներուն:

Մարկոսօֆ Պէյ, Հ. Բ. Ը. Միւլթեան հիմնարկութիւնէն մինչեւ իր մահը անոր մէջ ունեցած է կարեւոր աշխատանք որ յիշատակութեան արժանի է:

կերացուցին Աւարայրի հերոսամարտը, Վարդանանց ոգին Հայաստանեայց Եկեցիիին արի դիրքը, դարերու արհաւիրքներու ընթացքին մինչև այսօր 15 դար առաջ խիղճի ազատութեան և Հայրենիքի պաշտպանութեան համար մղուած զիւցաշնամարտը, այս ձեւով, ներկայացուեցաւ Քրիստոսեայ աշխարհին, որ տակաւին արժանաւորապէս չէ գնահատած զայն: Առաջին փորձ մըն էր ասիկա, յաջող փորձ մը, որուն համար խորունկ շնորհակալութիւն կը յայտնենք Սի Պի Էսի և մասնաւոր գնահատանք՝ պր. Նորհատին, որ ոչ միայն թատերախաղի վերածած էր Վարդանանքը, այլ՝ յանձնած էր հեռուստացոյցին անձնակազմին և զայն հետաքրքրած՝ հայ ժողովուրդի մեծ ազատամարտով:

Պարբեր.—

Գրագիտուհի Զապէլ Ասատուրի ՈՐԲՈՒՀԻՆ թատերախաղը բեմադրուեցաւ Նոյ. 20ին, Իսթ ձիւնիբը Հայ Սքուլի սրահին մէջ, նախաձեռնութեամբ Զ.Բ.Ը. Միւթեան Մեծն Պոսթընի Տիկնանց Օժանդակի, որուն ատենապետն է Տիկին Անժէլ Նաթալի: Հայ Մշակոյթի Ամսուան առթիւ սարքուած այս հանդէսին ներկայ էր հոծ բազմութիւն մը, Պոսթընէն և շրջակայքի քաղաքներէն: Որբուհի թատերախաղը կը բողկանոյ երեք արարէ և կը տեւէ երեք ժամ: Նիւթը առնուած է պոլսական կեանքէ: Դերակատարները, բոլորն ալ սիրողներ, լաւ կատարեցին իրենց դերերը:

Երիակոյ.—

Երջակոյի Արանց Մասնաճիւղի 1960 ի գործունէութեան ամփոփ պատկերը կուտանք ստորեւ. Մասնաճիւղը ունեցած է 1960 ի ընթացքին վարչական, անդամական և տիկնանց հետ խառն ժողովներ և երեք մեծ ձեռնարկներ:

Յունուար 6ին Հայ Աւետ. Եկեղեցւոյ սրահը տեղի ունեցաւ խառն վարչական ժողով, որու ընթացքին քննուեցան Դեկտ. 6ի պաշարին հաշիւները և որոշուեցաւ Շիքակոյի մասնաճիւղերուն հոլանաւորած Թէքէեան Վարժարանի միացեալ հաշիւը զրկել կեդրոն:

Յունուար 15 ին, Վարչական Ժողովը որոշեց հրաւիրել Միւթեանս ընդհանուր Նախագահ Տիար Ալեք Մանուկեանը Մայիս 1 ի առթիւ կազմակերպուած տեղական շրջանաւարտներու և Բարեգործականի օրուան նուիրուած հանդիսութեան:

Յունուար 29ին, անդամական Ընդհանուր ժողով, Հայ Աւետ. Եկեղեցւոյ սրահը Աննպատ օդին պատճառով հաւաքոյթը տեղի ունեցաւ Փետր. 5ին և կաատրուեցաւ վարչական ընտրութիւն: Փետր. 23 ին է՛վընսթընի եկեղեցւոյ սրահը տեղի ունեցաւ գեղարուեստական երեկոյթ մը. ցուցադրուեցաւ Բարեգործականի Միջին Արեւելքի դպրոցական կեանքէն ժապուէն մը: Հիւր բանախօսն էր պր. Միհրան Քիւփէլեան:

Ապրիլ 30ին, Շարաթ երեկոյ Արլինկթըն Հօթէլի մէջ պատուոյ ճաշ մը տրուեցաւ Միւթեանս մեծանուն Նախագահին և իր շնորհալի Տիկնոջ: Ներկայ էին Նախագահին ընկերացող խումբը, Արանց և Տիկնանց Վարչութեան անդամները և ուրիշ ականաւոր անձնաւորութիւններ՝ Բարեգործականի շրջանակէն:

Մայիս 1 ին Բարեգործականի և Շրջանաւարտ ուսանողներու նուիրուած շքեղ հանդիսութիւնը տեղի ունեցաւ է՛վընսթընի Հայաստանեայց Եկեղեցւոյ սրահին մէջ, օրուայ պատուոյ հիւր և գլխաւոր բանախօս ունենալով Նախագահ Տիար Ա. Մանուկեանը:

Մայիս 29ին անդամական ժողով Հայ Աւետ. Եկեղեցւոյ սրահը. ուր տեղական վարչական գործերու մասին խորհրդակցելէ յետոյ, ժողովը Ֆրեզնոյի մէջ կայանալիք Պատգամաւորական ժողովին իր պատգամաւորները ընտրեց:

Յունիս 31 ին տարեկան դաշտասանդէս, Սեպտ. 30ին գեղարուեստական երեկոյթ և վերջապէս Դեկտ. 4 ին տարեկան Պազար Ճոխ պիւֆէէն, նուէրներէն և վիճակահանութենէն զատ, մասնաւոր հանգանակութիւն եղաւ Թէքէեան վարժարանի Ֆոնտին համար Վարչական ժողովները շատ յաճախ կը գումարուին Վեթերան և պատուոյ անդամ Տիկին Վիքթորիա Ֆէնէրի բնակարանը:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

1960 թարեօրջանի վերջին ամիսներուն ստացուած են ստորև յիշուած
Կտակներն ու Նուիրացուութիւնները.—

	Տոլար
ա) Հանգուցեալ Մկրտիչ Ներսէսեանի կտակէն — Գալիֆորնիա	61691,16
բ) Տիար Արթաքի Գալթաքեանէ — Աթէնք	25000,00
գ) Տիար Վահրամ Իւզպաշեանի նուիրատուութիւնը — Նիւ Ճըրզի	20000,00
դ) Հանգուցեալ Յակոբ Մոմճեանի թողօնէն — Գալիֆորնիա	18805,00
ե) Տոքթ. Վարդգէս Մկրտիչեանէ	12669,82
զ) Հանգուցեալ Օր. Հերմիէ Զօհրապի կտակէն	10034,44
է) Հանգուցեալ Յակոբ Աջապահեանի թողօնէն — Գալիֆորնիա	8055,49
ը) Տոքթ. Միհրան Վարժապետեանէ — Շիքակօ	2500,00
թ) Տիար Ալեք Մանուկեանէ — Տիթրոյիթ	1000,00
ժ) Տիար Երուանդ Հիւսիսեանէ — Միլան	1000,00
ժա) Հանգուցեալ Խաչատուր Մանուկեանի թողօնէն — Ֆրեզնօ	1000,00
ժբ) Հանգուցեալ Պետրոս Զիթճեանի թողօնէն — Ֆրեզնօ	1000,00
ժգ) Հանգուցեալ Հրայ Գարաշաշեանի թողօնէն — Տրէքօրլ Հիլզ	874,94
ժդ) Պոլսոյ Ս. Փրկիչ Հիւանդանոցի հաշւոյն, զանազաններէ	4075,00
ժե) Տիկին Տոյրէզ Լիպմընէ	900,00
ժզ) Հանգուցեալ Միքայէլ Մարուքեանի թողօնէն — Տիթրոյիթ	724,76
ժէ) Տիար Արթին Ասլանեանէ, Նիւ Եօրք, նուէր	500,00
ժը) Անանուն բարերարէ մը, խնամատարական գործիէ համար	400,00
ժր) Հանգուցեալ Սօֆի Սարոյեանի թողօնէն — Սէլըմ-Մէս.	600,00
ի) Հանգուցեալ Կիւլիսն Կօտշեանի թողօնէն — Տիթրոյիթ	300,00
իա) Տիար Յակոբ Ս. Տէրաէրեանէ — Տիթրոյիթ	200,00
իբ) Հանգուցեալ Յակոբ Վահանեանի թողօնէն — Նիւ Եօրք	500,00
իգ) Հանգուցեալ Հէրի Մէսթճեանի թողօնէն — Ֆիլատէլֆիա	860 63

Ընդհանուր գումար 172,691,24

իական կինը՝ երգիծական սքեչը յաջողութեամբ կատարուեցաւ ընդհանուր ուրախութիւն սփռելով: Հանդէսի երկրորդ մասը սկսաւ Պր. Հմայեակ Գայլեանի բանախօսութեամբը որ յանուն Բարեգործականի շորհաւորեց Նոր Տարին: Սօսեցաւ հայ մշակոյթի մասին, վեր հանեց մեր նախնիքներուն, մասնաւորապէս Մեսրոպի գերը, և մաղթեց որ խաղաղութեան մէջ շարունակուի հայրենիքի վերելքը ու Հ.Բ.Ը. Միութեան ազգապահպանման փրկարար գործը: Յետոյ սկսաւ գեղարուեստական բաժինը - «Ձօն Հայ Մշակոյթին» ի ներկայացումով, յօրինուած Տիար Նուպար Բիւրէճեանէ և դաշնաւորուած Պր Արթիւր Մործիկեանէ: Միութեան պատուակալ նախագահ Պր. Արամ Էսքիճեան շնորհաւորական խօսքերով և երջանկութեան մաղթանքներով կտրեց Նոր Տարւոյ կարկանդակը, որուն բաղդաբեր ոսկին ինկաւ Օր՝ Լիզէթ Պոյաճեանի, Նուէրներու վիճակահանութենէն վերջ պարերը սկսան և տեւեցին մինչեւ ուշ գիշեր:

Կիպրոս. Դաւեանկահար Բաճֆի Պետրոսեան Մեկզոնեան Հաստատութեան մեջ.—

Դաշնակահար Բաճֆի Պետրոսեան իր Կիպրոս այցելութեան առթիւ հաստատութեան աշակերտութեան յատկացուած նուագահանդէս մը տուաւ 21 Յունուարի Ծաբաթ երեկոյեան որ իսկական վայելք մը եղաւ իւրաքանչիւր աշակերտի համար: Յաջորդաբար ան նուագեց Սքարլաթիէն երկու սօնաթ, Շուպէրթէն «Սօնաթ լա Մաժօր»ը Լիսսթէն «Յիւնէրայ»ը: Կարճ դադարէ մը ետք, Պետրոսեան նուագեց Բարաջանեանի «Էմփրօմփիթիւն» և Սաչաաըրեանի «Սօնաթան»: Իսկ Շօփէնի «Սըքէրձօ» Թիւ 2, «Նօքթիւռն» Թիւ 2, «Էթիւտ» Թիւ 13-21 և Փօլօնէզով աւարտեց իր յայտագիրը:

Նիկոսիոյ և Լաոնապայի մէջ տուած զոյգ նուագահանդէսներէ վերջ, Պ. Բաճֆի Պետրոսեան նուագեց նաեւ Կիպրոսի Հեռասփիւռէն:

Կիպրահայ զաղուքը ցօրացաւ սկսած է: Արտագաղթը՝ թէեւ զանդաղ բայց տե-

ԳԱՀԻՐԷԻ Զ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Յունիս 4ին, Կիրակի օր, երեկոյեան ժամը 6ին Բարեգործականի գրասենեակը դարձեալ ոգեւորութեան, աշխոյժ և կենսալից կեանքի ժամադրավայրը հանդիսացած էր, վասնզի մեր երկսեռ երիտասարդութիւնը հաւաքուած էր տօնելու Մարտ 5ին Նայլ Հոլի մէջ սարքած իր գեղարուեստական հաւաքոյթին յաջողութիւնը: Այս առիթով հրաւիրուած էին նաեւ այդ ձեռնարկին օժանդակող տիկիները, օրիորդները և պարոնները, որոնք մեծ մասով հաճած էին իրենց ներկայութեամբը պատուել այս երիտասարդական հաւաքոյթը: Գեղարուեստական պէսպիսուն յայտագրով կաղմակերպուած էր պողպաղակասեղան մը, որուն բացումը կատարեց Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան փոխ-ատենապետ Տիար Հայկ Օնաննէսեան, որ իր գնահատանքի խօսքը ուղղեց ամէն անոնց որոնք այնքան նուիրուածով կազմակերպած էին Մարտ 5ի հաւաքոյթը և թելադրեց միշտ կապուած մնալ Բարեգործականի մշակութային աշխատանքներուն, որոնց համար Միութիւնը կը զոհարէ նիւթական և բարոյական իր արամադրելի միջոցները, որպէսզի մեր նոր սերունդը լա՛ւ, օրինակելի և արժանաւոր զաւակները ըլլան մեր սքանչելի ժողովուրդին և պատուաբեր ու հաւատարիմ քաղաքացիները՝ Արտաական Միացեալ Հանրապետութեան:

Յարգելի Ատենապետին այս խօսքերը ողջունուեցան ներկաներու սրտագին ծածահարութիւններով: Ապա, Պր. Օնաննէսեան սեղանապետութեան հրաւիրեց Պր. Վ. Գարտաշեանը, որ նոյնպէս խանդավառ խօսքերով վեր առաւ Բարեգործականի բողմատեսակ գործերուն ազգօգուտ հանգամանքը, շեշտեց ինչպէս անցեալին, նոյնպէս և ներկայիս, դպրոցական և մշակութային մարզերուն առնչութեամբ կատարուած դուրսնորութեանց կարեւորութիւնը և հրաւիրեց

ուպէս կը շարունակուի: Մինչեւ հիմա, այս փոքր գաղութէն աւելի քան հինգ հարիւր հոգի մեկնած են զլիաւորաբար Անգլիա, ուր կեանքը անհամեմատօրէն աւելի նպաստաւոր պայմաններ ունի:

երիտասարդութիւնը աւելի սեղմ շարքերով բոլորուելի Բարեգործականի շուրջը: Եւ անցնելով յայտագրի գործադրութեան, Տիար Գարտաշեան, իրեն յատուկ ճարտարութեամբ գիտցաւ անմիջապէս մտերմիկ և զուարթ մթնոլորտ մը ստեղծել ծաղիկներով, քաղցրըրեղէններով և պողպաղակի պնակներով պնտուած սեղաններուն շուրջը:

Շատ հաճելի արտասանութիւն մը ըրաւ երիտասարդացի պատուական աշխատաւորուհիներէն Օր. Թերէզ Պարսոյեան, որուն «Լուսաւորչի Կանթեղը», Յ. Թումանեանէ, ունկնդրեցինք քաղցր յուզումով: Պերճ Գարակէօզեան (մանտօլին) և Պաշիկ Եազրճեան (կիթառ) նուագեցին, Տիկին Թաշճեան և Շաւարշ Գարանֆիլեան մեներգներ հրամցուցին, Օր. Ով. Գարտաշեան և Պերճ Մելիքեան զուարթ պատմուածքներով քրքրիչներ խլեցին, խօսեցան Տեսքը Սեղի Գոչուհեան, Արմէն Տատուր, Հայկ Ժամկոչեան և «Տեղեկատու»ի խմբագիրը, որոնք ջերմ խօսքերով Հայ Բեմին, Հայ Գրականութեան և Հայ Լեզուին ծառայելու պէտքը շեշտեցին:

Ապա բաժնուեցան Բարեգործականի Յոբելիական շարագրակոն մրցանքի երէցներու բաժինէն առաջնութիւն շահածներուն նուէրները: Շահողները եղան Օշին Է՛Տճեան և Միքայէլ Ժամկոչեան որոնք կիսեցին առաջին մրցանակը՝ հինգ ոսկին, ստանալով համապատասխան արժէքով առարկաներ — գիրք, հայկական սկաւառակ, ինքնահոս:

Պատանիներէն առաջնութիւն շահած էին Գրիգոր Յարութիւն Մարգարեան և Պերճ Գոգորեան, որոնք նոյնպէս կիսեցին առաջին մրցանակը՝ հինգ ոսկին, ստանալով համապատասխան արժէքով իրենց նախասիրած առարկաները:

Իսկ Քաջալերական մրցանակի արժանացած էին Օրիորդներ Շուշան Սարգիսեան և Լիւսի Ֆէհմի:

Եւ հաւաքոյթը սեղանապետին ողջերթի խօսքերովը վերջ գտաւ, ընդհանուր խանդավառութեան մէջ:

— Ի պատիւ Բարեգործականի օրջանաւարտ անդամ անդամուհիներուն և սանսանուհիներու, Յուլիս 7ին, Ուրբաթ երեւ

կոյ, Երիտասարդաց Մշակութային Մարմինը սարքած էր պողպաղակասեղան մը, որուն հրաւիրուած էին նաեւ բազմավաստակ բանասէր Տիար Արշակ Ալպոյաճեան, Յոբելիական Կարգադիր Յանձնախումբի նախագահ Արժ. Տէր Պետրոս Քնկ. Ֆէրէճեան, Յոբելիական Գծագրական Յանձնախումբի զնահատիչ մարմինի անդամները՝ Տիկիններ Ա. Պոյաճեան, Նորա Իփէքեան, և նկարիչ Բ. Կոճամանեան: Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան Վարչութեան որոշումով, նոյն օրը արուեսցան մրցանակները գծագրական մրցանքին առաջնութիւնը շահողներուն, որոնց պատրաստած նկարները ցուցադրուած էին:

Հավաքոյթը բացուեցաւ որոշեալ ժամուն, և մեր ժրաջան անդամ-անդամուհիները հաճոյքով սպասարկեցին ներկաներուն ուրախ ու խանդավառ մթնոլորտի մը մէջ: Գործադրուեցաւ օրուան յայտագիրը որ զանազան երգերով, նուագով և զուարճալի պատմութիւններով համեմուած էր: Այսպէս, Օր. Թ. Պարսոյեան արտասանեց մեր սիրելի բանաստեղծ Յովհ. Թումանեանի «Լուսաւորչի Կանթեղը», Օր. Սրբուհի Շաքարեանի հայաստանեան խանդավառիչ մեներգները, Ֆէրէճեան քայրերու զուգերգը ինչպէս և Ժիրայր Փալանճեանի ձեռնադաշնակով բերած զնահատելի մասնակցութիւնը ողջունուեցան բոլուն ծափերով:

Նոյն յայտագրին մասնակցեցան նաեւ Օր. Լիւսի Սարգիսեան՝ արտասանութեամբ, Նուպար Բերդեան, Պերճ Գարակէօզեան և Պերճ Մարտիրոսեան զուարթ մենախօսութիւններով և պատմուածքներով: Եղան պարզեւաւոր հարց-պատասխաններ, որոնց յաջորդեց գծագրական մրցանքի յաջողածներու մրցանակաբաշխութիւնը: Այս մըրցանքի առաջնութիւնը շահած է Գալուստեան Վարժարանի աշակերտուհիներէն Օր. Նուարդ Աբոյեան, որուն արուեսցաւ մեծատաղանդ նկարիչ Օննիկ Աւետիսեանի Հայ Եկարիչներ եւ Քանդակագործներ Ֆրանսերէն մեծածաւալ և շքեղ հատորը: Իսկ Քաջալերական մրցանակի արժանի նկատուեցան.— Արեգ Տիգրան Պապիկեան,

Գրիգոր Յարութիւն Մարգարեան
Լիլա Արամ Կէրիկեան,
Հրանդ Մինաս Քէշիշեան,

որոնց իւրաքանչիւրին տրուեցաւ Տիար Արշակ Այլաօյաճեանի վերջին գործերէն «Արարական Միացեալ Հանրապետութեան Երկրացոսի Նահանգը եւ Հայերը» հասորը:

Մարզական Կեանք.—

Շաբաթ երեկոյ, 17 Յունիս 1961, Հ.Մ.Ը.Մ. - ՆՈՒՊԱՐ մարզադաշտի վրայ, Արարական Միացեալ Հանրապետութեան հարաւային Նահանգի Մարզական Ֆիտբորասիոնը հանդիպում մը կազմակերպած էր ընդմէջ Խորհրդային Միութեան և Արարական Միացեալ Հանրապետութեան աթլէթիկ խումբերուն: Ստուար բազմութիւն մը փութացած էր վայելելու մարզական այս եզակի ցուցադրութիւնը, որուն բացումը կատարուեցաւ օրուան խօսնակին ուղերձով և մասնակցող մարզիկներու տողանցքով: Սովէթ խումբը կը բաղկանար ինը մարզիկներէ, որոնց երկուքը կին, իսկ արարականը՝ 12: որոնց երեքը իգական սե. է: Կատարուեցան Գետնի, Զուգափայտի, Կայուն ձողի Օղակներու, Գերանի, Փայտեայ ձիւղ վրայ շատ հետաքրքրական փորձեր և ցուցադրութիւններ: Իրաւ է թէ Սովէթ մարզիկները ուժի, ճարպիչութեան և փորձառութեան առաւելութեամբ օժտուած, տիրացան յաղթանակի բաժակին, այսուհանդերձ մեր արար բզբայրնրը ամենակարճ ժամանակի ընթացքին յաջողած էին ձեռք բերել գովելի արդիւնքներ, և արժանացան ներկաներու գնահատութեան: Յիշատակութեան արժանի էր մանաւանդ Ռիտա Ապաէլ Ռաճման մարզիկը, որուն հետաքրքրական փորձերը արժանացան խանդավառ ծափերու: Այս մարզիկը յաջող ելոյթներ ունեցած է նաեւ Սիւրիոյ և Եռլոսլուիոյ մէջ, և արժէքաւոր ու ապագայ խոստացող մարզիկ մըն է: Իսկ արարական խումբի 14 - 15 տարեկան օրիորդները, որոնք հաղիւ քանի մը ամսուան վարժութեամբ ասպարէզ իջած էին, իրենց բազմաթիւ ցուցադրութիւններով արժանացան ներկաներու հետաքրքրութեան և գնահատանքին: Ռուս օրիորդները 18 և 28 տարեկան, ի յայտ բերին իրենց ճարտար և ճարպիկ փորձերով շեշտուած առաւելութիւն մը մեր մարզիկ օրիորդ-

ներուն վրայ, ինչ որ զարմանալի չէ, քանի որ, ինչպէս ըսինք, մերինները դեռ նոր սկսած են հետեւիլ մարզական այս ճիւղին, և վստահ ենք որ, յառաջիկայ տարիներու ընթացքին Ա.Մ.Հ. ի մարզիկները նոր նուաճումներ եւս պիտի արձանագրեն այս մարզին մէջ:

Օղակներու փորձերը խիտ շահեկան էին: Խօսնակը մեծ գովեստով խօսեցաւ Հայաստանի հաշակաւոր մարզիկ Այլաօյ Ազարեանի մասին և ըսաւ թէ ան 1957 էն իվեր Ալխարհի Ախոյեանը կը մնայ մարզական այս ճիւղին մէջ, և թէ դժբաղդարար հակառակ եղած հրաւերին չկրցաւ Երկրացոսայցելել: Աւելցնենք նաեւ թէ Սովիթ խումբին մաս կը կազմէր Երեւանէն ոռու մարզիկ մը՝ Լազարեւ, որ իր յանդուգն փորձերով շատ ծափահարուեցաւ:

Իսկ որ մարզասէրներուն համար շատ յիշատակելի երեկոյթ մը եղաւ այս հանդիսութիւնը, որ հաւանաբար կրկնուի ուրիշ առիթներով:

Հ.Մ.Ը.Մ. - ՆՈՒՊԱՐ Ընդհանուր Ժողովը.—

Հինգշաբթի՝ 29 Յունիս 1961, երեկոյեան ժամը 9ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. - ՆՈՒՊԱՐ ի տարեկան Ընդհ. Ժողովը, ատենակցութեամբ Տիար Թումայիկ Սէտիֆ ճեանի, Ատենադպիրն էր տիար Պերճ Սէտիֆճեան:

Շրջանաւարտ Վարչութեան ատենադպիր Տիար Յակոբ Էքսէրճեան և Գանձապետ Տիար Միհրան Էթմէքճեան յաջորդաբար ներկայացուցին Վարչութեան բարոյսկան - մարզական և նիւթական գործունէութեանց տեղեկագիրները, որոնք արժանացան հոծ թիւով ժողովականներուն միաձայն գնահատութեան:

Կատարուեցաւ Նոր Վարչութեան ընտրութիւնը և ընտրուեցան հետեւեալ յարգելի ազգայինները, որոնց անունները կը ներկայացնենք այսուրեւնական կարգով.—

- Տնօրէ՛ Ալթունեան Վահէ,
- Գութնուեան Հրանդ,
- Մագուպեան Պերճ,
- Էթմէքճեան Միհրան,
- Էքսէրճեան Յակոբ,
- Ծաղմատարեան Վահէ,
- Պողիկեան Ազատ,

Նաիրի Զարեան

ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՅԻ ԾԱՂԿՈՒՆԻԻ ՄԱԸՐ

ՄԵՐ ՔԱՂՅՐԱՐՍՈՒ ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒՆ

Քահիրէի հայութիւնը, մանաւանդ երիտասարդ սերունդը կ'ողբայ մահը Տիկին



«Պիոններ Կանչու՛մ» ես կարդացի Կարէն Սիմոնեանի «Բաց Նամակը» որն ուղղուած էր թերթի բոլոր ընթերցողներին: Կարդացի եւ շատ ուրախացայ:

Երիտասարդ գրողը կոչ է անում Հայաստանի «բոլոր դպրոցներում ստեղծել Մայրենի լեզուն եւ գրականութիւնը սիրողների ակումբներ»: Պայքարել ամէն տեսակի կոպիտ, տգեղ, մեր հոյակապ լեզուն խորթ, օտարամուտ բառերի ու արտայայտութիւնների դէմ: Այդ կոչը միանգամայն տեղին է եւ ժամանակին:

Հայոց լեզուն պատկանում է ամենահին, ամենազարգացած եւ ամենահարուստ լեզուների դասին: Հայոց լեզուն ընդունակ է արտայայտելու մարդկային ամենանուրբ զգացմունքներն ու ամենաբարդ խոհերը:

Մեր լեզուն հզօր է, հնչեղ է եւ գեղեցիկ: Բայց եւ այնպէս նա կարիք է զգում յատուկ խնամքի եւ հոգատարութեան: Պատկերացրէք մի կողմից Թումանեանի «Անու-

Զարուհի Ծաղկունիի (ծնեալ Քանթարեան), որ տեղի ունեցաւ Յուլիսի 23ին, մայրաքաղաքի Տար Էլ. ՇիՖա հիւանդանոցին մէջ: Ողբացեալը բնիկ Սթանպուլ, ծնած 1897 ին, իր ուսումը ստացած էր Կ. Պոլսոյ Դպրոցատէր Տիկնանց Վարժարանին մէջ եւ պատրաստուած Հայ դպրոցին ծառայութեան, որւն կոչոււմն ունէր: Արդարեւ Տիկին Ծաղկունի աւելի քան բազումն սարիքներ ծառայեց մեր ազգային վարժարաններուն, որպէս հայ լեզուի նուիրեալ ուսուցչուհի: Երկու տարի առաջ ազգային իշխանութիւնը զնահատելով իր երկարամեայ ծառայութիւնը, վայելուչ կերպով տնտեսականութեան յոբելեանը, որ նորութիւն մը եղաւ նաեւ մեր համրային

Սրէնճեան Սարգիս,
Սէտէֆանեան Պերճ,
Բէնիսեան Յովհաննէս,
Բէսէնեան Զաւէն:

Հայուէքներէ վերընտրուեցաւ Տիար Կարօ Նէրէտեան: Մեր շնորհաւորութիւններն ու յաջողութեան լաւազոյն մաղթները նորընտիր վարչութեան:

կեանքին մէջ: Տիկին Ծաղկունի իր մահէն քանի մը ամիս առաջ ամուսինը կորսնցնելու դժբախտութիւնը ունցած էր եւ ֆիզիքապէս շատ բոյլ վիճակ մը ունէր: Իսկ անսպասելի մահովը կ'անհետանայ հայ գիրին, հայ դպրոցին եւ հայ մշակոյթին անօժանդակ լինելու գործիքը:

Կատարուեցաւ Ազգային յուղարկւորութիւն, Առաջնորդ Սրբազան հօր նախագահութեամբ, որ պատճառով դամբանականով մը մեծարեց հանգուցեալին յիշատակը: Եկեղեցւոյ օրջափակին մէջ, Գալուստեան Վարժարանի Տնօրէն Տիար Տիգրան Պապիկեան, Ուսումնական Խորհուրդէն Տիկին Վարդուհի Տատուր, իսկ գերեզմանատան մէջ Տիար Բերովբէ Կոստանդեան յուզիչ դամբանախօսները եղան արդիւնաւետ եւ անձնուէր Ծաղկունիին, որուն բարձր հողակոյթին առջեւ կը խոնարհիմք եւ մեր վօսալի ցաւակցութիւնները կը յայտնենք իր սգակիր պարագաներուն:

չը», Իսահակեանի «Աբու Լալա Մահարին» Տէրեանի և Մեծարեանցի քնարական բանաստեղծութիւնները, միւս կողմից այն լեզուն, որով իօսում են մեր շրջապատում որոշ մարդիկ, մասնաւորապէս երիտասարդներ՝ տանը, փողոցում, հասարակական վայրերում: Նրանց համար մեր գրական և խօսակցական լեզուները կարծես գտնոււմ են իրարից հեռու մի քանի հարիւրամեակ: Այդ մարդիկ չեն սիրում խօսել այն լեզուով, որով գրում են: Ոմանք մինչև իսկ ամաչում են խօսել մաքուր գրական հայերէնով:

Գրականութեան մէջ մենք ստեղծել ենք նուրբ և քաղցրահնչիւն օրինակներ: Ահա Տէրեանը.

Ձեռներում ձեր մանրիկ, նուազուն,
 Ձեր ձայնում, երբ ասում էք «Տէրեան»
 Ձեր բարակ ժպտում նաիրեան
 Մի թախի՛ կայ մեղմած ու թաքուն:

Հասցա բարձրաձայն կարգացէ՛ք այս սողերը:

Ինչո՞ւմ են իբրև մեղեդի, փափուկ, սահուն և ախորժալուրս Յւ զլացմունքի ինչ կախարդող նրբերանգներ են արտայայտում: Կարգացէ՛ք հայ գրական լեզուի մշակուածութեան այս փայլուն օրինակը և իսկոյն անդրադարձէք այն «լեզու լին», որով մեր բուհերի որոշ ուսանողներ են իրար հետ խօսում:

— Արա, փախ հո չե՞ս: Խի՞ ես թիթիզ թիթիզ խօսում:

— Եթանք «Կալիքունիան» տենանք, զվեր կինո ա:

Երիտասարդութեան և պատանիների շրջանում բուն է դրել մի վտանգաւոր նախապաշարմունք: Նրանք մաքուր գրական լեզուով խօսելը համարում են մի տեսակ ցուցամոլութիւն և ենթարկում են ծաղրի: Այդ նախապաշարմունքը հնից է գալիս: Մեր գիւղացիները մեզ անխնայ «ձեռ էին առնում» (կը ծաղրէին Ս.Շ.) այն դէպքերում, երբ մենք մեր խօսքի մէջ խառնում էինք դպրոցում սովորած մի որեւէ գրական արտահայտութիւն: Յիշում եմ, մեր գիւղում ես մի անգամ «ինչխի» փոխարէն ասացի «ինչպէս»: Գիւղացիները,

մեծ ու փոքր, վրաս ծիծաղեցին և ամիսներով անուս մնաց ինչպէս:

Մաքուր գրական լեզուի նկատմամբ ետամնաց խաւերի այս ծաղրական վերաբերմունքն ունէր խոր հոգեբանական պատճառներ: Ինչո՞ւ մէկն իրենցից տարբերուի կամ իրենց մակարդակից բարձրանայ:

Գիւղացիները ծաղրում էին մեզ նաեւ այն դէպքում, երբ քաղաքից եկած ուսուցիչները ազլեցութեան տակ մենք փորձում էինք մաքուր լուսցուել կամ մաքուր ու ճաշկով հագնուել: «Գրանց մտիկ»: ուզում են գլխներիս վարժապետ դառնալ»:

Բայց դա յիսուն տարի առաջ էր:

Կեանքը փոխուել է: Մեր գիւղացիներն այսօր իրենց վարժապետների նման մաքուր և կոկիկ են հաղնում: Ոմանք հագնում են տարազի վերջին խօսքով, բայց գործածում են բարբառային գոհեկաբանութիւններից և օտարամուտ աղճատ բառերից խառնազանգուած մի ժարգոնային լեզու: Լի՞րն է այս տարօրինակ հակասութեան պատճառը: Ինչո՞ւ մեր սոցակները (սովորողները) չեն ձգտում իրենց խօսակցական լեզուն սազեցնել իրենց հագուստին:

Այստեղ արդէն գլխաւոր արգելակը ծուլութիւնն է: Գեղեցիկ հագուստը ձեռք են բերում ծնողներին հաշուին: Գեղեցիկ լեզու ձեռք բերելու համար պէտք է աշխատել անձամբ և յալթահարել որոշ դժուարութիւններ:

Կան երիտասարդներ, որոնք լաւ գիտեն գրական լեզուն, գրում են միանգամայն հարթ ու սահուն, բայց խօսելիս առատ հարկ են տալիս ժարգոնին — աղճատ լեզու: Նրանք պարլապէս չեն հասկանում, որ գրական լեզուի, մասնաւորապէս գեղարուեստական գրականութեան լեզուի արմատները թաղուած են խօսակցական լեզուի մէջ: Ամէն մի ժողովուրդ, ինչպէս որ խօսում է, այն էլ ի վերջոյ, կը սկսի գրել: Մենք չպէտք է թոյլ տանք, որ մեր գրական լեզուն այնքան հեռանայ խօսակցութիւնից, որ մի օր էլ ընկնի մեր «հանգուցեալ» զբոսբարի օրին: Ես կ'ուզէի չերմ արձագանգել Կարէն Միմոնեանի «բաց նամակ»ին ժողովրդական մեծ նուաճում կը լինէր եթէ մեր հանրապետութեան դպրոցներում

ՄՓԻԻՌԻԱ ՀԱՅ

ԿԵԱՆՔԻՆ

Զուլիցերիոյ գերմանական մասին մէջ գոյութիւն ունի Հայերու բարեկամ Զուլիցերիացիներու Միութիւն մը որ ամբողջ երկրին մէջ իր մասնաճիւղերը ունի Այս միութեան անդամներուն մեծ մասը կը մասնակցի բողոքական եկեղեցիներու միութեան: Այս միութիւնը զանազան երկիրներու մէջ ի նպաստ հայերու բարեսիրական հաստատութիւններ ունի, որոնցմէ մէկն է Յունաստանի ծերանոցը: Ենթադրուած է 20 օդաւէտ սենեակներ: Այժմ հոն պատրաստուած են 26 ծերեր, որոնցմէ ոմանք ենթակայ են բժշկական տեւական խնամքի:

Իսրայելու լահայ կեանք,

Սիպիլի նուիրուած օրը արժանավայել հանդիսութեամբ տօնուեցաւ 29 Յունուար 1961ին՝ Կիրակի, Հայաստան Սանուց Միութեան սրահին մէջ Հայաստան վարժարանի հին և նոր աշակերտութեան կողմէ, խուռն բազմութեան մը ներկայութեան: Ներկայաներուն մէջ կը նշմարուէին Թրքահայոց Պատրիարք՝ Ամեն. Գարեգին Ս. Արք. Խայրապետներն, Սիպիլի աղջիկը՝ Օր. Ատրինէ Տօնէլեան, Կեղրոնական և Հայաստան լիսէներու հայ գրականութեան սուգ դասա-

սկօէին կազմակերպուել և եռանդով գործել մայրենի լեզուն սիրողների կողմերն, որոնց մէջ պէտք է համախմբուեն ո՛չ միայն աշակերտներ, այլ և ուսուցիչներ: Այո՛ ուսուցիչներ:

Ուսուցիչը նոյնպէս պէտք է ձգտի խօսել մաքուր գրական հայերէնով և իր այդ պարտադիր արժանիքը հաղորդել իր շակերտներին: Եւ դա պարտաւոր է անել ո՛չ միայն հայոց լեզուի և գրականութեան դասատուն, այլև բոլոր ուսուցիչներն անխտիր: Եկէ՛ք խօսենք մեր մայրենի գրական լեզուով: Դա իւրաքանչիւր մարդու առաքինութեան առաջին կէտն է, նրա կրթութեան ամենավառ ապացոյցը, նրա ամենագեղեցիկ զարդը:

Եկէ՛ք սիրենք մեր նուիրական խոհերի թարգման, մեր քաղցրաբարբար հայոց լեզուն:

ՏՐԻՏՈՒՐ ՅԱՐԴԱՆՔԻ

Վ. ՄԱԼԵՂԵԱՆԻ 90 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Սփիւռահայ մտաւորականութեան Նահապետին, ծերունագարդ Վահան Մալեղեանի 90 ամեակին առթիւ, իր սրակից բարեկամները փափաքեցան նոր գրոյով մը յաւերժացնել այդ բարեբասիկ Տարեդարձն ալ. «Հանգանակ» թիւղոսին օակ ամփոփելով իր լուագոյն բանաստեղծութիւնները, մեծ մասամբ արդէն հրատարակուած «Կերոններ», «Կարապի Երգը» եւ La Corbeille Fleurie իր երեւակ հասոցներուն մէջ, մաս մըն ալ յետագային պարբերաբար կարգ մը թերթերու եւ հանդէսներու մէջ լոյս տեսած:

Բաց աստի, Յաւելուածով մը կը յուսագրուին նաեւ, բազմամասակ գրագէտին եւ գործիչին աւելի քան 70 տարիներու ազգային եւ գրական գործունեութիւնը յաջողաբար համակրական գրուածքներ եւ հատուածներ, որ կը կազմեն բարեդէպ շարունակութիւնը 80 ամեակի Յուսամտեանին եւ՝ 85 ամեակի Չօնամտեանին մէջ լոյս տեսած բանկազին վկայութիւններուն:

Այդ գեղակազմ գրոյակը կամ եւս այլովմը պիտի բնծայուի հայրենասեր «Ներթասարդ Ծերունի»ին յառաջիկայ 1961 Հոկտեմբեր 1ին, Նիոի իր բնակարանին մեջ տեղի ունենալիք Տօնակատութեան միջոցին, որուն պիտի մասնակցին նաեւ իր գրչի եւ գաղափարի բնկերները:

Նիս, 1 Յունիս 1961 ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ Հասցէ.— G. BAHRY 37, Rue de la Tourelle. Boulogne S/Seine France.

Խօսները, Հայաստան Լիսէի հիմնադիրը և Տնօրէնուհին, ևւայլն:

Գործադրուեցաւ Սիպիլի գործերուն նուիրուած և խնամքով պատրաստուած յայտագիր մը: Արտասանուեցան անմահ բանաստեղծուհիին շարք մը քերթուածները: Կարդացուեցաւ «Գութը» անուն արձակը: Օր. Վ. Մանուէլեան համապարփակ կերպով

տուաւ Սիպիլի գրական բեղուն վառակը: Էսայեանի շրջանաւարտուհիներէն երիտասարդ գրագիտուհի Օր. Շողեր Չափարեան, յաջողապէս վերլուծեց Սիպիլը, իբր նորավիպագիր և ճշգրտորէն սահմանեց այն կարեւոր դերը, զոր գրագիտուհին կատարեց իր նորավէպերով, կնոջական դատի առնչութեամբ: Օր. Սեդա Վասիլեան պատմեց այդ նորավէպերէն մին՝ «Մօր մը նենգութիւնը» խորագրով: Կարգացուեցաւ Սիպիլի աշակերտուհիներէն Տիկին Հայկանոյ Մառքի գեղեցիկ մէկ գրութիւնը. «Սիպիլէն Յիշատակներս» վերնագրով: Վերջապէս էսայեանի շրջանաւարտուհիներէն երիտասարդ գրագիտուհի Օր. Հիլտա Գալֆեան, համառօտ բանախօսութեան մը ձեւով՝ գեղեցիկօրէն տուաւ Սիպիլը, որպէս Բանաստեղծուհի Սրբազան Պատրիարք Հօր գնահատական և քաջալերական խօսքերով վերջ գտաւ այս շահեկան հանդէսը:

Թբւահայ Նկարիչներու Առաջին հաւաքական Յաւանդանքը.—

Ապրիլ 13 ին բացուեալ կատարուեցաւ Թրքահայ նկարիչներու հաւաքական առաջին ցուցահանդէսին, Կեդրոնական Սանուց Միութեան ընդարձակ սրահին մէջ: Տպաւորապաշտներէն մինչև Ապսղրէթ, այլազան ոճերով նկարող իսթանպուլահայ գրեթէ բոլոր նկարիչները հոն ժամադրուած էին: Նորահաս սերունդնալ ունէր իր ներկայացուցիչները, որոնք խոստմնալից արժէքներ են:

Յակոբ Պարոնեանի «Շողոֆորը» Ֆերիզիլի վարժարանի բեմին վրայ սիրողներու կողմէ բեմադրուեցաւ, արձանագրելով գրեանահատելի յաջողութիւն: Բեմադրիչն էր արուեստագէտ Պ. Դապառաճեան:

Թբւահայ Աւսուցչութեան ի պատիւ, 14 Ապրիլի գիշերը, Սարայ սինէմայի մէջ տեղի ունեցաւ նորակազմ Թրքահայ ուսուցչական Միութեան ի պատիւ կազմակերպուած նուագահանդէսը: Ներկայ էին Պատրիարք Սրբազան Հայրը, Շնորք Եպիսկ., մամուլի ներկայացուցիչներ, մտաւորականներ, երաժշտասէրներ և ընտիր հասարակութիւն մը, Բրոֆ. Արչամ Գավաֆեանի

ղեկաւարութեամբ Կեդրոնականի Սէնֆոնիկ նուագախումբը նուագեց Հէնտէլի, Ֆօլքմանի, Հայտընի հատընաիր գործերէն՝ Ժամացոյցի համանուագը, Քօնչէրթօ Կրոստոն և Սէրէնատ թիւ 2ը: Յայտագրի երկրորդ մասին մէջ Տիկ. Ալիս Մանուկեան - քօլօրաթուրա սօփրանօ, մենեքոյեց Համբարձում Պէրպէրեանի «Անորը» և Սէվիլի Սափրիչէն կտոր-մը. Նուրհան Ռուչան՝ հանդէս եկաւ Անուշէն և Սէվիլի Սափրիչէն երկու կտորներու մենեքոյեց և իր տիրական ձայնովը ունկնդիրները կախարգեց: Դաշնակով իր մասնակցութիւնը բերաւ Վարուժան Արսլանեան:

Մամիկոնեան Երզնայումբ. — Տօքթ. Տիգրան Մամիկոնեան Ապրիլ 21 ին, Սարայ Սինէմային մէջ տուաւ եղանակի իր վերջին ներգահանդէսը: Այս տարուան յայտագիրը քանի մը նորութիւններով համեմուած էր: Նախ նուագուեցաւ Թրքական «Ամպամած Լեւնագագաթ»ը քայլերգը, որուն յաջորդեց Կարօ Ռաքարեանի «Կանաչել են Արտերը.» Տվորաքի յաջորդեց Կոմիտասի «Շողեր Չան» և «Կուսմար Պառկէ» երգերը: Տիկին Ալիս Մանուկեան, Վարուժան Արսլանեանի դաշնակի ընկերակցութեամբ երգեց «Անուշէն», «Լա Պօհէմէն», և «Մինիօն» օփերաներէն այլեւայլ կտորներ:

Կանաչեանի «Նանօր»ը վերջինը եղաւ երգացանկին և ծափահարուեցաւ խանդավառօրէն: Տօքթ. Տիգրան Մամիկոնեան Հայ արուեստին նուիրուած սիրելի դէմք մըն է, որուն կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:

Քառասնամեայ Յոբելեան Գրագիտ Վ. Ս. Ծովակի.—

Ապրիլ 21 ին, Կեդրոնական Սանուց Միութեան հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ վաստակաւոր գրագէտ Վահրամ Սարգիսեանի — Վ. Ս. Ծովակ — գրական գործունէութեան քառասնամեայ յորելեանը: Խօսեցան Գուրգէն Թրեմեց, Վահան Խիւտալերեան, Խաչիկ Ամիրեան, որոնք դրուատիքը ըրին Ծովակի գրական քառասնամեայ գործունէութեան: Գրագէտին «Սատանի Խաղ» պատմուածքէն քաղուած թատերական պատկերացում մը պատրաս-

Նաիրի Զարեան

ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՅԻ ԾԱՂԿՈՒՆԻԻ ՄԱԸՐ

ՄԵՐ ՔԱՂՅՐԱՐՍՈՒ ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒՆ

Քահիրէի հայութիւնը, մանաւանդ երիտասարդ սերունդը կ'ողբայ մահը Տիկին

«Պիոններ Կանչու՛մ» ես կարդացի Կարէն Սիմոնեանի «Բաց Նամակը» որն ուղղուած էր թերթի բոլոր ընթերցողներին: Կարդացի եւ շատ ուրախացայ:



Երիտասարդ գրողը կոչ է անում Հայաստանի «բոլոր դպրոցներում ստեղծել Մայրենի լեզուն եւ գրականութիւնը սիրողների ակումբներ»: Պայքարել ամէն տեսակի կոպիտ, տգեղ, մեր հոյակապ լեզուն խորթ, օտարամուտ բառերի ու արտայայտութիւնների դէմ: Այդ կոչը միանգամայն տեղին է եւ ժամանակին:

Հայոց լեզուն պատկանում է ամենահին, ամենազարգացած եւ ամենահարուստ լեզուների դասին: Հայոց լեզուն ընդունակ է արտայայտելու մարդկային ամենանուրբ զգացմունքներն ու ամենաբարդ խոհերը:

Մեր լեզուն հզօր է, հնչեղ է եւ գեղեցիկ: Բայց եւ այնպէս նա կարիք է զգում յատուկ խնամքի եւ հոգատարութեան: Պատկերացրէք մի կողմից Թումանեանի «Անու-

կեանքին մէջ: Տիկին Ծաղկունի իր մահէն բացի մը ամիս առաջ ամուսինը կորսնցնելու դժբախտութիւնը ունցած էր եւ ֆիզիքապէս շատ բոյլ վիճակ մը ունէր: Իսկ անսպասելի մահովը կ'անհետանայ հայ գիրին, հայ դպրոցին եւ հայ մշակոյթին անօժանդակ լինելու գործիչը:

Կասարուեցաւ Ազգային յուղարկւորութիւն, Առաջնորդ Սրբազան հօր նախագահութեամբ, որ պատճառով դամբանականով մը մեծարեց հանգուցեալին յիշատակը: Եկեղեցւոյ օրջափակին մէջ, Գալուստեան Վարժարանի Յեօհէն Տիար Տիգրան Պապիկեան, Ուսումնական Խորհուրդէն Տիկին Վարդուհի Տասուր, իսկ գերեզմանասան մէջ Տիար Քերովբէ Կոստանդեան յուզիչ դամբանախօսները եղան արդիւնաւետ եւ անձնուէր Ծաղկունիին, որուն բարձր հողակոյթին առջեւ կը խոնարհիմք եւ մեր վօսալի ցաւակցութիւնները կը յայտնենք իր սգակիր պարագաներուն:

Զարուհի Ծաղկունիի (ծնեալ Քանթարեան), որ տեղի ունեցաւ Յուլիսի 23ին, մայրաքաղաքի Տար Էլ Շիքա հիւանդանոցին մէջ: Ողբացեալը բնիկ Սթանպուլ, ծնած 1897 ին, իր ուսումը ստացած էր Կ. Պոլսոյ Դպրոցատէր Տիկնանց Վարժարանին մէջ եւ պատրաստուած Հայ դպրոցին ծառայութեան, որուն կոչումն ունէր: Արդարեւ Տիկին Ծաղկունի աւելի քան բազումը սարիքէր ծառայեց մեր ազգային վարժարաններուն, որպէս հայ լեզուի նուիրեալ ուսուցչուհի: Երկու տարի առաջ ազգային իշխանութիւնը զնահատելով իր երկարամեայ ծառայութիւնը, վայելուչ կերպով տնտեսական յոբելեանը, որ նորութիւն մը եղաւ նաեւ մեր համրային

Սրբէնեան Սարգիս,
Սէտէֆանեան Պերճ,
Բէնիսեան Յովհաննէս,
Բէնիսեան Զաւէն:

Հայուէքներէ վերընտրուեցաւ Տիար Կարօ Նէրէտեան: Մեր շնորհաւորութիւններն ու յաջողութեան լաւազոյն մղութ ները նորընտիր վարչութեան:

չը», Իսահակեանի «Աբու Լալա Մահարին» Տէրեանի և Մեծարեանցի քնարական բանաստեղծութիւնները, միւս կողմից այն լեզուն, որով իօսում են մեր շրջապատում որոշ մարդիկ, մասնաւորապէս երիտասարդներ՝ տանը, փողոցում, հասարակական վայրերում: Նրանց համար մեր գրական և խօսակցական լեզուները կարծես գտնոււմ են իրարից հեռու մի քանի հարիւրամեակ: Այդ մարդիկ չեն սիրում խօսել այն լեզուով, որով գրում են: Ոմանք մինչև իսկ ամաչում են խօսել մաքուր գրական հայերէնով:

Գրականութեան մէջ մենք ստեղծել ենք նուրբ և քաղցրահնչիւն օրինակներ: Ահա Տէրեանը.

Ձեռներում ձեր մանրիկ, նուազուն,
 Ձեր ձայնում, երբ ասում էք «Տէրեան»
 Ձեր բարակ ժպտում նաիրեան
 Մի թախի՛ կայ մեղմած ու թաքուն:

Հասցա բարձրաձայն կարգացէ՛ք այս սողերը:

Ինչո՞ւմ են իբրև մեղեդի, փափուկ, սահուն և ախորժալուրս Յւ զլացմունքի ինչ կախարդող նրբերանգներ են արտայայտում: Կարգացէ՛ք հայ գրական լեզուի մշակուածութեան այս փայլուն օրինակը և իսկոյն անդրադարձէք այն «լեզու լին», որով մեր բուհերի որոշ ուսանողներ են իրար հետ խօսում:

— Արա, փախ հո չե՞ս: Խի՞ ես թիթիզ թիթիզ խօսում:

— Եթանք «Կալիքունիան» տենանք, զվեր կինո ա:

Երիտասարդութեան և պատանիների շրջանում բուն է դրել մի վտանգաւոր նախապաշարմունք: Նրանք մաքուր գրական լեզուով խօսելը համարում են մի տեսակ ցուցամոլութիւն և ենթարկում են ծաղրի: Այդ նախապաշարմունքը հնից է գալիս: Մեր գիւղացիները մեզ անխնայ «ձեռ էին առնում» (կը ծաղրէին Ս.Շ.) այն դէպքերում, երբ մենք մեր խօսքի մէջ խառնում էինք դպրոցում սովորած մի որեւէ գրական արտահայտութիւն: Յիշում եմ, մեր գիւղում ես մի անգամ «ինչխի» փոխարէն ասացի «ինչպէս»: Գիւղացիները,

մեծ ու փոքր, վրաս ծիծաղեցին և ամիսներով անուս մնաց ինչպէս:

Մաքուր գրական լեզուի նկատմամբ ետամնաց խաւերի այս ծաղրական վերաբերմունքն ունէր խոր հոգեբանական պատճառներ: Ինչո՞ւ մէկն իրենցից տարբերուի կամ իրենց մակարդակից բարձրանայ:

Գիւղացիները ծաղրում էին մեզ նաեւ այն դէպքում, երբ քաղաքից եկած ուսուցիչները ազլեցութեան տակ մենք փորձում էինք մաքուր լուսցուել կամ մաքուր ու ճաշկով հագնուել: «Դրանց մտիկ... ուզում են գլխներին վարժապետ դառնալ»:

Բայց դա յիսուն տարի առաջ էր:

Կեանքը փոխուել է: Մեր գիւղացիներն այսօր իրենց վարժապետների նման մաքուր և կոկիկ են հաղնում: Ոմանք հագնում են տարազի վերջին խօսքով, բայց գործածում են բարբառային գոհեկաբանութիւններից և օտարամուտ աղճատ բառերից խառնազանգուած մի ժարգոնային լեզու: Լի՞րն է այս տարօրինակ հակասութեան պատճառը: Ինչո՞ւ մեր սոցակները (սովորողները) չեն ձգտում իրենց խօսակցական լեզուն սազեցնել իրենց հագուստին:

Այստեղ արդէն գլխաւոր արգելակը ծուլութիւնն է: Գեղեցիկ հագուստը ձեռք են բերում ծնողներին հաշուին: Գեղեցիկ լեզու ձեռք բերելու համար պէտք է աշխատել անձամբ և յալթահարել որոշ դժուարութիւններ:

Կան երիտասարդներ, որոնք լաւ գիտեն գրական լեզուն, գրում են միանգամայն հարթ ու սահուն, բայց խօսելիս առատ հարկ են տալիս ժարգոնին — աղճատ լեզու: Նրանք պարլապէս չեն հասկանում, որ գրական լեզուի, մասնաւորապէս գեղարուեստական գրականութեան լեզուի արմատները թաղուած են խօսակցական լեզուի մէջ: Ամէն մի ժողովուրդ, ինչպէս որ խօսում է, այն էլ ի վերջոյ, կը սկսի գրել: Մենք չպէտք է թոյլ տանք, որ մեր գրական լեզուն այնքան հեռանայ խօսակցութիւնից, որ մի օր էլ ընկնի մեր «հանգուցեալ» զբոսբարի օրին: Ես կ'ուզէի չերմ արձագանգել Կարէն Միմոնեանի «բաց նամակ»ին ժողովրդական մեծ նուաճում կը լինէր եթէ մեր հանրապետութեան դպրոցներում

ՄՓԻԻՌԻԱ ՀԱՅ

ԿԵԱՆՔԻՆ

Զուլիցերիոյ գերմանական մասին մէջ գոյութիւն ունի Հայերու բարեկամ Զուլիցերիացիներու Միութիւն մը որ ամբողջ երկրին մէջ իր մասնաճիւղերը ունի Այս միութեան անդամներուն մեծ մասը կը մասնակցի բողոքական եկեղեցիներու միութեան: Այս միութիւնը զանազան երկիրներու մէջ ի նպաստ հայերու բարեսիրական հաստատութիւններ ունի, որոնցմէ մէկն է Յունաստանի ծերանոցը: Ենթադրուած է 20 օդաւէտ սենեակներ: Այժմ հոն պատրաստուած են 26 ծերեր, որոնցմէ ոմանք ենթակայ են բժշկական տեւական խնամքի:

Իսրայելու լահայ կեանք,

Սիպիլի նուիրուած օրը արժանավայել հանդիսութեամբ տօնուեցաւ 29 Յունուար 1961ին՝ Կիրակի, Հայաստան Սանուց Միութեան սրահին մէջ Հայաստան վարժարանի հին և նոր աշակերտութեան կողմէ, խուռն բազմութեան մը ներկայութեան: Ներկայաներուն մէջ կը նշմարուէին Թրքահայոց Պատրիարք՝ Ամեն. Գարեգին Ս. Արք. Խաչատուրեան, Սիպիլի աղջիկը՝ Օր. Ատրինէ Տօնէլեան, Կեղրոնական և Հայաստան լիսէներու հայ գրականութեան սուգ դասա-

սկօէին կազմակերպուել և եռանդով գործել մայրենի լեզուն սիրողների կողմերէն, որոնց մէջ պէտք է համախմբուեն ո՛չ միայն աշակերտներ, այլ և ուսուցիչներ: Այո՛ ուսուցիչներ:

Ուսուցիչը նոյնպէս պէտք է ձգտի խօսել մաքուր գրական հայերէնով և իր այդ պարտադիր արժանիքը հաղորդել իր շակերտներին: Եւ դա պարտաւոր է անել ո՛չ միայն հայոց լեզուի և գրականութեան դասատուն, այլև բոլոր ուսուցիչներն անխտիր: Եկէ՛ք խօսենք մեր մայրենի գրական լեզուով: Դա իւրաքանչիւր մարդու առաքինութեան առաջին կէտն է, նրա կրթութեան ամենավառ ապացոյցը, նրա ամենագեղեցիկ զարդը:

Եկէ՛ք սիրենք մեր նուիրական խոհերի թարգման, մեր քաղցրաբարբար հայոց լեզուն:

ՏՐԻՏՈՒՐ ՅԱՐԴԱՆՔԻ

Վ. ՄԱԼԵՂԵԱՆԻ 90 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Սփիւռահայ մտաւորականութեան Նահապետին, ծերունագարդ Վահան Մալեղեանի 90 ամեակին առթիւ, իր սրակից բարեկամները փափաքեցան նոր գրոյով մը յաւերժացնել այդ բարեբասիկ Տարեդարձն ալ. «Հանգանակ» թիւղոսին օակ ամփոփելով իր լուագոյն բանաստեղծութիւնները, մեծ մասամբ արդէն հրատարակուած «Կերոններ», «Կարապի Երգը» եւ La Corbeille Fleurie իր երեւակ հասոցներուն մէջ, մաս մըն ալ յետագային պարբերաբար կարգ մը թերթերու եւ հանդէսներու մէջ լոյս տեսած:

Բաց աստի, Յաւելուածով մը կը յուսագրուին նաեւ, բազմամասակ գրագէտին եւ գործիչին աւելի քան 70 տարիներու ազգային եւ գրական գործունեութիւնը յաջողաբար համակրական գրուածքներ եւ հատուածներ, որ կը կարգ մնն բարեդէպ տարուակութիւնը 80 ամեակի Յուսամտեանին եւ՝ 85 ամեակի Չօնամտեանին մէջ լոյս տեսած բանկագին վկայութիւններուն:

Այդ գեղակագմ գրոյեր կամ եւս այլովը պիտի բնծայուի հայրենասեր «Ներթասարդ Ծերունի»ին յառաջիկայ 1961 Հոկտեմբեր 1ին, Նիտի իր բնակարանին մեջ տեղի ունենալիք Տօնակատութեան միջոցին, որուն պիտի մասնակցին նաեւ իր գրչի եւ գաղափարի բնկերները:

Նիս, 1 Յունիս 1961 ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ Հասցէ.— G. BAHRY 37, Rue de la Tourelle. Boulogne S/Seine France.

Խօսները, Հայաստան Լիսէի հիմնադիրը և Տնօրէնուհին, ևւային:

Գործադրուեցաւ Սիպիլի գործերուն նուիրուած և խնամքով պատրաստուած յայտագիր մը: Արտասանուեցան անմահ բանաստեղծուհիին շարք մը քերթուածները: Կարդացուեցաւ «Գուրթ» անուն արձակը: Օր. Վ. Մանուէլեան համապարփակ կերպով

տուաւ Սիպիլի գրական բեղուն վառակը: Էսայեանի շրջանաւարտուհիներէն երիտասարդ գրագիտուհի Օր. Շողեր Չափարեան, յաջողապէս վերլուծեց Սիպիլը, իբր նորավիպագիր և ճշգրտորէն սահմանեց այն կարեւոր դերը, զոր գրագիտուհին կատարեց իր նորավէպերով, կնոջական դատի առնչութեամբ: Օր. Սեդա Վասիլեան պատմեց այդ նորավէպերէն մին՝ «Մօր մը նենգութիւնը» խորագրով: Կարգացուեցաւ Սիպիլի աշակերտուհիներէն Տիկին Հայկանոյ Մաքի գեղեցիկ մէկ գրութիւնը. «Սիպիլէն Յիշատակներս» վերնագրով: Վերջապէս էսայեանի շրջանաւարտուհիներէն երիտասարդ գրագիտուհի Օր. Հիլտա Գալֆեան, համառօտ բանախօսութեան մը ձեւով՝ գեղեցիկօրէն տուաւ Սիպիլը, որպէս Բանաստեղծուհի Սրբազան Պատրիարք Հօր գնահատական և քաջալերական խօսքերով վերջ գտաւ այս շահեկան հանդէսը:

Թբւմայ Նկարիչներու Առաջին հաւաքական Յաւանանդերք.—

Ապրիլ 13 ին բացուեալ կատարուեցաւ Թրքահայ նկարիչներու հաւաքական առաջին ցուցահանդէսին, Կեդրոնական Սանուց Միութեան ընդարձակ սրահին մէջ: Տպաւորապաշտներէն մինչև Ապսղրէթ, այլազան ոճերով նկարող իսթանպուլահայ գրեթէ բոլոր նկարիչները հոն ժամադրուած էին: Նորահաս սերունդնալ ունէր իր ներկայացուցիչները, որոնք խոստմնալից արժէքներ են:

Յակոբ Պարոնեանի «Շողոֆորը» Ֆերիզիլի վարժարանի բեմին վրայ սիրողներու կողմէ բեմադրուեցաւ, արձանագրելով գրեանահատելի յաջողութիւն: Բեմադրիչն էր արուեստագէտ Պ. Դապառածեան:

Թբւմայ Աւսուցչութեան ի պատիւ, 14 Ապրիլի գիշերը, Սարայ սինէմայի մէջ տեղի ունեցաւ նորակազմ Թրքահայ ուսուցչական Միութեան ի պատիւ կազմակերպուած նուագահանդէսը: Ներկայ էին Պատրիարք Սրբազան Հայրը, Շնորք Եպիսկ., մամուլի ներկայացուցիչներ, մտաւորականներ, երաժշտասէրներ և ընտիր հասարակութիւն մը, Բրոֆ. Արչամ Գավաֆեանի

ղեկաւարութեամբ Կեդրոնականի Սէնֆոնիկ նուագախումբը նուագեց Հէնտէլի, Ֆօլքմանի, Հայտընի հատընաիր գործերէն՝ Ժամացոյցի համանուագը, Քօնչէրթօ Կրոստոն և Սէրէնատ թիւ 2ը: Յայտագրի երկրորդ մասին մէջ Տիկ. Ալիս Մանուկեան - քօլօրաթուրա սօփրանօ, մենեքոյեց Համբարձում Պէրպէրեանի «Անորը» և Սէվիլի Սափրիչէն կտոր-մը, Նուրհան Ռուչան՝ հանդէս եկաւ Անուշէն և Սէվիլի Սափրիչէն երկու կտորներու մենեքոյե և իր տիրական ձայնովը ունկնդիրները կախարգեց: Դաշնակով իր մասնակցութիւնը բերաւ Վարուժան Արսլանեան:

Մամիկոնեան Երզնայումբ.— Տօքթ. Տիգրան Մամիկոնեան Ապրիլ 21 ին, Սարայ Սինէմային մէջ տուաւ եղանակի իր վերջին ներգահանդէսը: Այս տարուան յայտագիրը քանի մը նորութիւններով համեմուած էր: Նախ նուագուեցաւ Թրքական «Ամպամած Լեւնագագաթ»ը քայլերգը, որուն յաջորդեց Կարօ Ռաքարեանի «Կանաչել են Արտերը.» Տվորաքի յաջորդեց Կոմիտասի «Շողեր Չան» և «Կուսար Պառկէ» երգերը: Տիկին Ալիս Մանուկեան, Վարուժան Արսլանեանի դաշնակի ընկերակցութեամբ երգեց «Անուշէն», «Լա Պօհէմէն», և «Մինիօն» օփերաներէն այլեւայլ կտորներ:

Կանաչեանի «Նանօր»ը վերջինը եղաւ երգացանկին և ծափահարուեցաւ խանդավառօրէն: Տօքթ. Տիգրան Մամիկոնեան Հայ արուեստին նուիրուած սիրելի դէմք մըն է, որուն կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:

Քառասնամեայ Յոբելեան Գրագիտ Վ. Ս. Ծովակի.—

Ապրիլ 21 ին, Կեդրոնական Սանուց Միութեան հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ վաստակաւոր գրագէտ Վահրամ Սարգիսեանի — Վ. Ս. Ծովակ — գրական գործունէութեան քառասնամեայ յորելեանը: Խօսեցան Գուրգէն Թրեմց, Վահան Խիւտավերտեան, Խաչիկ Ամիրեան, որոնք դրուատիքը ըրին Ծովակի գրական քառասնամեայ գործունէութեան: Գրագէտին «Սատանի Խաղ» պատմուածքէն քաղուած թատերական պատկերացում մը պատրաս-

տած էր արուեստագէտ Գուպուսանեան: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիրը: Յորհեարին շնորհակալութեան խօսքը կարգաց դերասան Գէորգ Գուպուսանեան, որմէ վերջ հանդէսը փակեց գիւղացի Յակոբ Մնձուրի:

Իսիկեցեռունի փոքրաթիւ հայ գաղութը ներկայիս կը բոլորէ խաղաղ կեանք մը: Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցին բաց է. Վազըֆ գիւղի քահանան կուգայ պատարագելու և ժողովուրդը միթարելու: 40-50 երկսեռ փոքրիկներ զուրկ են հայ դաստիարակութենէ. մինչ գաղութը կարող է ծաղկոց մը կամ մանկապարտէզ մը բանալու, որովհետեւ ունի նիւթական լայն միջոցներ: Եթէ գաղութը ունենայ մնայուն քահանայ մը, կրնայ օգտակար ըլլալ կրթական և հոգեւոր մարզերու մէջ:

Թեհրան, Պարսկաստան. —

Հ.Բ.Ը. Միութեան Թեհրանի Տիկնանց Մասնաճիւղի 25 ամեակը մեծ շուքով տօնուեցաւ 1960 Նոյ. 20 ին, Հայ Ակումբ սրահին մէջ, նախաձեռնութեամբ նոյն Մասնաճիւղի վարչութեան:

Հանդէսին ներկայ էին Թեմին Առաջնորդ Գեր. Տ. Արտակ Եպս. Մանուկեանը, Թեհրանի կեդրոնական Վարչութեան կազմը, շորս քոյր Միութիւններուն ներկայացուցիչները և Միութեանս անդամ-անդամուհիները:

Հանդեսը բացուեցաւ Պետական քայլերգով, որմէ յետոյ Տիկին Ա. Շիշմանեան կարգաց Տիկնանց Մասնաճիւղի 25 տարիներու ընթացքին կատարած բեղմնաւոր աշխատանքի մանրամասն տեղեկագիրը, միաժամանակ ոգեկոչելով յիշատակը Միութեանս անդամ-անդամուհիներու, որ յարգուեցաւ յոտնկայս Պր. Վ. Աբրահամեանի գնահատանքի և շնորհաւորանքի խօսքէն վերջ բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազան Հայրը, որ գնահատանքի ջերմ արտայայտութիւններ ունեցաւ Մասնաճիւղիս 25 ամեակին առթիւ, ապա անդրադարձաւ Հ.Բ.Ը. Միութեան 55 տարիներու ազգօգուտ և բեղմնաւոր գործունէութեան, որմէ յետոյ վարչութեան անդամուհիներուն բաժ-

նեց այն վկայականները, որոնք Միութեանս Վեթերան անդամուհիներու համար որպէս գնահատանք ստացուած էին Նիւ-Եորքի կեդր. Պատուարժան Վարչութենէն: Կարգացուեցան ստացուած ուղերձները, որմէ յետոյ եղաւ օրուայ համապատասխան գեղարուեստական բաժին: Հանդէսի վերջաւորութեան ներկաները հիւրասիրուեցան զովացուցիչներով և սանտալիչներով:

Լիբանան,

Արամ Խսչուուրեան Պէյրութի մէջ. —

Լիբանանի Ազգային Երաժշտանոցի վերատեսուչը, Գեղարուեստից Վարժարանի տնօրէնը, արուեստագէտներ, մտաւորականներ և հոծ բաղմուտիւն մը հայերու՝ Երկուշաբթի, Մայիս 8ին, կէսօրէ ետք ժամը 3.30ին՝ Պէյրութի սաւառնակներու կայանին մէջ խանդափն ծափերով և կեցցէներով ողջունեցին աշխարհահռչակ նուագահանը, Արամ Խաչատուրեան:

Յաջորդ օր, Երեքշաբթի, Մայիս 9ին, առաւօտեան ժամը 10ին, հայ նուագահանը մամուլի ասուլիս մը կատարեց, Գարլդոն պանդոկին մէջ. Պէյրութի գրեթէ բոլոր թերթերը ներկայացուցիչներ զրկած էին: Պատասխանելով հարցումներու՝ Արամ Խաչատուրեան, ի մէջ այլոց, կատարեց հետեւեալ յայտարարութիւնները. —

«Երակներուս մէջ կը հոսի հայկական արիւն, ամբողջ երաժշտութիւնս թաթախուած է իմ ժողովուրդիս բաղձանքներուն և երազներուն մէջ:

Հայկական շրջանակի մէջ՝ Արամ Խաչատուրեան ըսաւ. —

Իւրաքանչիւր երաժշտութիւն նախ ազգային է, ապա՝ միջազգային:

Արարական երաժշտութիւնը ազդած է թրքական, սպանիական, հարաւային ամերիկեան երաժշտութիւններուն վրայ:

Հայաստանի մէջ այսօր կը գործեն եօթանասուն երաժիշտներ: Ասոնցմէ առնուազն տասը երաժիշտներ միջազգային չափանիշով հասուն են»:

Երեք մեծ նուագահանդէսներ տեղի ունեցան «Իւնեսքոյ»ի սրահին մէջ, Մայիս 12ին, 13ին, 14ին:

Գահիրէի համերգային նուագախումբը

լսելի ըրաւ հայ նսուազահանին գործերը, ղեկավարութեամբ նոյն ինքն Արամ Խաչատուրեանի:

Այդ նսուազահանդէսներու ընթացքին՝ երաժշտասէր հասարակութիւնը լսեց հայ արուեստագէտին հետեւեալ գործերը. — Համերգային Պոեմ, Մասաւրաթ, Գոնչերդոյ ան բէ միներ, ջութակի եւ նուագախումբի համար, ան լա պեմոլ՝ դաճնակի եւ նուագախումբի համար, Հասուածներ՝ «Գայիանե» եւ:

Այս նսուազահանդէսները հոչակեցին յաղթանակը հայ հանճարին:

Գ. Կիւլպիկեան Հիմնադրութեան որոշումով Թրիփոլիի եկեղեցիին շինութիւնը սկսած է ի յիշատակ իր Հիմնադիր Գալուստ Կիւլպէնկեանի:

Լիբանանի Արսալին նախարարութեան ապահովութեան գրասենեակի պետ Պ. Ժան Կոկիկեան՝ Թեհրանի լիբանանեան հիւպատոս նշանակուած է, և մեկնած իր պաշտօնատեղին:

Գրական մրցանակ.—

Բարիզէն կը հաղորդեն որ Մամուլի Բէլման մրցանակը, որ ամէն տարի կը տրուի այն գործերուն որոնք իտէալի մը կամ ասպարէզի մը հանդէպ հաւատարմութիւն կը պատկերացնեն այս տարի միւս 20-նսութեամբ տրուած է իրանանահայ գրագէտ Վահէ Բաչայի և Ֆրանսացի լրագրող Ռոժէ Պիլֆէի Մեր հայրենակից Վահէ Բաչան սփրանս-Սուառն Թերթին մէջ լոյս տեսած «Կոյրերուն կեանքը» անուն ուրբորթածին համար այս մրցանակին արժանացաւ:

Ամերիկա, Հայազիտութեան Դասընթացը Հարվըրտ Համալսարանին մէջ.—

Նախագահ Քեմեսի մեծ գովեստով արժայատեցաւ Հայկական Ուսմանց եւ Որոնումներու Ազգային Ընկերակցութեան քափած ջանքերուն համար, որոնց շնորհիւ կարելի եղաւ հաստատել Հայկական Ուսումնասիրութեանց ու Որոնումներու դասընթաց մը, Հարվըրտ Համալսարանին մէջ: Նախապէս, իւր դրկած մասնաւոր պատգամին մէջ, մասնաւոր կերպով շնորհակտեց Ընկերակցութիւնը որ հանգանակեց 400,000 տո-

ՀԱՅՐԵՆԻ ԱՂԽԱՐՀ

Երեւան - Սեւան Երկաթուղի.—

Երեք տարի առաջ սկսած էր բանիլ Երեւան Հրազդան շոգեկառքը: Այժմ բացուածը կատարուած է Հրազդան. Սեւան երկաթուղիին, որ առաջինին շարունակութիւնն է: Ժայռեր խորտակուեցան բլուրներ հարթուեցան, ուղեթուղիներ կանգնուեցան, ձորերու կամ խորխորատներու վրայ շինուեցան բազմաթիւ կամուրջներ, Հրազդանի խոր կիրճէն դէպի վեր, դէպի սարահարթը դուրս գալու համար պէտք եղաւ ուրրաններ ստեղծել, փայտեղիներ բանալ:

Երեւան - Սեւան երկաթուղիին միջոցաւ բոլորովին պիտի փոխուի կեանքը՝ Վարսեր, Դոմաշէն, Մաղկունք գիւղերուն, որոնք կը գտնուին Հրազդանի և Սեւանի միջեւ:

լար, որով կարելի եղաւ Հարվըրտի մէջ հաստատել դասընթացը:

Այս գումարը կարելիութիւն պիտի տայ Հարվըրտ Համալսարանին, որմէ պատուով օրգանաւոր եղաւ Նախագահ Քեմեսի 1940 թուականին, ստեղծելու հայկական ուսմանց դասընթաց մը, անոր յասկացնելով մասնաւոր դասախօս մը, Նախագահը բնկերակցութեան այս ջանքերով կը հետաքրքրուի որովհետեւ հաստատուիլի դասընթացը կապուցի հիմնաւորց ազգի մը, հայ ազգին մշակոյթին հետ, ազգի մը՝ որ անգնահատելի ծառայութիւններ մատուցած է համաշխարհային եւ մասնաւոր կերպով Մեծաւոր Արեւելեան մշակոյթին:

Յիշեալ Ընկերակցութեան կեդրոնական մարմինը պատկանող անդամներն են.— Օր. Սիրաբի Տեր Ներսիսեան, հնագէտ-բնագագէտ. Դր. Ռիչրոս Ֆրայ եւ Աղա Խան, իրանագէտներ, Դր. Ուիլյեմ Լեկեր, պատմագէտ, Սրբ Համիլթըն Ճիպ, արեւելագէտ, Վերապատուելի Ա. Ա. Պետիկեան, Մանուկ Յունկ:

Հայկական Ուսմանց եւ Որոնումներու Ընկերակցութիւնը հիմնուեցաւ 1955ին, կարգ մը Ամերիկահայերու եւ Հարվըրտ Համալսարանի պրոֆեսորներուն կողմէ. Ընկերակցութեան նպատակը եղած է ուսումնասիրել եւ տարածել հայ լեզուն եւ մշակոյթը:

Նիֆիթա ԽՐՈՒՆԵԼ ԵՐԵԱՆԻ մէջ.—

Հայաստանի կառավարութեան պետերը զիմաւորեցին Նիֆիթա ԽՐՈՒՆԵԼը՝ Երեւանի սաւառնակներու կայանին մէջ։ Տոճմային տարազներով երկու դեռատի հայ աղջիկներ հաց, աղ և գինի մատուցին հիւրին։ Կարմիր փողկապներով երկու աղջիկներ ալ ծաղիկներ մատուցին։

Մայրաքաղաքի մուտքին, Յաղթանակի կամուրջին մօտ, դպրոցականներ ողջունեցին զինք։

Նիֆիթա ԽՐՈՒՆԵԼ այցելեց Հայաստանի քառասնամեայ տնտեսութեան հայոց ցուցահանգէսը, երկարօրէն կանգ առնելով իւրաքանչիւր բաժնի առջեւ։

Ներկայ եղաւ «Դաւիթ Բեկ» օպերայի ներկայացման։

Այցելեց Բիւրսկանի Աստղադիտարանը։

Տեսակցեցաւ այն հայերուն հետ՝ որոնք արտասահմանեան երկիրներէն գացած էին Հայաստան, քառասնամեակի հանդէսներուն ներկայ ըլլալու համար։

Մեծանուն Հայ գիտնականի մը կորուսը.—

Փետրուար 2ին, երկարատեւ հիւանդութեան մը հետեւանքով, 74 տարեկան հասակին մէջ մեռաւ հռչակաւոր զիտնական, արեւելագէտ, արուեստի պատմաբան և հնէաբան Յովսէփ Օրբէլին։ Մտած էր 1887ին։ Օրբէլիի գլխաւոր գործերը կը վերաբերին Անդրկովկասի և Փոքր Ասիոյ ժողովուրդներու մշակոյթի պատմութեան։ Ակադամական Օրբէլի իր երկերուն մէջ յայտնաբերած է այն նպաստը, զոր Արեւելքի ժողովուրդները բերին համաշխարհային քաղաքակրթութեան։ Յովսէփ Օրբէլի անդամ էր Հայաստանի Գիտութեանց Ակադեմիային, որուն առաջին նախագահը եղած էր։ Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին էրմիթաժի թանգարանին տնօրէնը ըլլալով, մեծապէս նպաստեց այս թանգարանի գանձերուն պահպանման։

Երեւանի Երբող ծածկուած չուկան սկսած է շահարկուիլ։ Կառուցուած է վարդապետի տաճարէ։ Ընդարձակ սրահը ունի ութը հարիւր մէթր քառակուսի տարածու-

թիւն։ Կան գեղեցիկ մարմարապատ վաճառատեղիներ, մսի յատուկ բաւաժ, սըրճարան, զովացուցիչներու կրպակ, ընդարձակ սառնարան եւ այլն։

Հայաստանի երաժշտական 35 վարժարաններուն մէջ կ'ուսանին 6000 օժտեալ աշակերտներ։ Այս վարժարաններուն մեծն էն կարեւորն է Ռ. Մելիքեանի անուան հիմնուածը, որ 1938ին իր գոռները բացաւ երիտասարդութեան առջեւ։ Այս վարժարանը ցարդ տուած է 500 երաժիշտներ։ Ներկայիս 250 երիտասարդներ և երիտասարդուհիներ կ'ուսանին այս վարժարանի եօթը բաժիններու մէջ։

Վարժարանին հպարտութիւնը կը կազմէ երիտասարդներու սենֆօնիք նուագախումբը։ Ստեղծուած է նաեւ լարային ազգային գործիքներու անսամպլ մը որուն վարիչն է Սաչիկ Աւետիսեան։ Մելիքեանի անուան այս երաժշտական վարժարանը Երեւանի բանուորներու մէջ երժշտութիւն տարածելու նախաձեռնութիւնը ցոյց տուաւ։

Երկրի ծննդեան երկու հարիւր մեակի առթիւ Երեւանի Պետական Մատենադարանին մէջ ցուցադրուած են անոր գործերուն հայերէն թարգմանութիւնները։

Թանկարժեք Նուիրատուութիւն մը։— Երեւանի պատմութեան թանգարանը հին և միջնադարեան 170 դրամներու արժէքաւոր հաւաքածոյ մը ստացած է վերջերս. Նիւ Եօրքէն, Տիար Գեղամ Գազանճեանի կողմէ։ Դրամները զանազան երկիրներու պատկանած և շրջաբերութեան դրուած են 4-3 (Բ.Ա.) դարերուն։ Հին հայկական արծաթեայ և պղինձեայ դրամներու շարքին մէջ հետաքրքրական են յատկապէս Մոփքի հայկական պետութեան, Քսերքսես թագաւորին, Տիգրան Բ. թագաւորին իշխանութեան տարիներուն գործածուած հազուագիւղա դրամները։ Հաւաքածոյին մէջ կայ նաեւ Պոնտոսի թագաւոր Միհրդատ Երդ Եւպատորի լաւ պահպանուած արծաթեայ դրամը։ Ուշագրաւ են Հոռմէական կայսրութեան Ա. և Բ. դարերու ոսկիէ, արծաթէ և պղինձէ շքադրամները, որոնց շատերը կը կրեն Հայաստանի վերաբերեալ

խորհրդանիշեր և գրութիւններ, Գերակշիռ տեղ կը գրաւեն Կիլիկիոյ հայկական պետութեան արծաթեայ և պղինձեայ դրամները, ժամանակագրական կարգով դասակարգուած է Կիլիկիոյ 14 հայ թագաւորներու (12-14 դար) դրամները:

Անփոխարինելի Կորուս մը.—

1961 Յունիս 6ին, Հայաստանի երգահաններէն փրոֆ. Անուշաւան Գրիգորի Տէր Ղեւոնդեան կնքած է իր մահկանացուն 74 տարեկանին: Ծնած էր 1887 Մարտ 8ին, Թիֆլիսի մէջ: Հեղինակած է բազմաթիւ երգեր և գործիքային երաժշտական կտորներ, ինչպէս նաեւ գրած՝ «Աեդա», «Արեւի Շողերի մէջ», օփերաներն ու «Անահիտ», «Հրօ Հարսնցուն» պալէնները: Երկար տարիներ եղած է Խրեւանի, Պտքուի և Թիֆլիսի երաժշտանոցներու անօրէն ու դասախօս: Իր աշակերտներէն՝ ի մէջ այլոց՝ կ'արժէ յիշել Ալ. Յարութիւնեանը, Առնօ Պապաջանեանը, և ողբացեալ Աշոտ Սաթեանը:

«Անուց»ի 700րդ Բեմադրութիւնը.—

Անմահանուն Յովհաննէս Թումանեանի բանաստեղծութեամբ և Արմէն Տիգրանեանի զմայելի երաժշտութեամբ կեանքի կոչուած «Անուց» օփերան 700րդ անգամն ըլլալով բեմադրուած է Երեւանի Ալ. Սպենդիարեանի անուան օփերայի մէջ մասնակցութեամբ Շարա Տալեանի (Սարօ), որ հակառակ իր յառաջացեալ տարիքին երիտասարդական խանդով կատարած է իր դերը Աշխարհի մէջ չկայ օփերա մը, որ երկու տասնամեակներու ընթացքին այսքան բեմադրուած ըլլայ: Առաջին անգամ «Անուցը» ներկայացուած է Ալեքսանդրապոլի մէջ, 4 Օգոստոս 1912ին:

ՍԱՐՄԵՆ

(Արմենակ Սարգիսեան)

Ծննդեան 60-ամեակի առիթով.—

Դեռ նոր էր լրացել ապագայ բանաստեղծի 14 տարին, 1915 թուականի թրքական արիւնոտ եղեռնի պատճառով ծնողներին գրկուած պատանի Արմենակը բռնած իր փոքրիկ քրոջ՝ Տիգրանուհիի ձեռքը, թողեց Արեւմտեան Հայաստանում, Վանայ ծովի փոքր ինչ հեռու գտնուող հայրենի Պախլանց գիւղը և գաղթելով անցաւ Ա-

ԳԱՀԻՐԷԻ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Այցելութիւն.—

Յունիս 25ին, Միութեանս գրասենեակին մէջ, հաճոյքն ունեցանք ընդունելու Տիար Ներսէս Ներսէսեանը, որ իր շնոհալի Տիկնոջը հետ Հայաստանէն կը վերադառնար, միանայի ճամբով իր բնակավայրը՝ Տիթրոյիտ մեկնելու համար:

Խանդավառ և միշտ երիտասարդ անձ-

րաքսի ափը՝ Իր նման որբացած հաղարաւոր երեխաների հետ նա ճաշակեց կեանքի դառնութիւնները, ապաստան գտնելով Գանձակի, Ծաղկաձորի, Լենինականի և Երեւանի մանկատներում:

Անցան տարիներ Ազատութեան արեւը շողաց Հայաստանում և երբեմնի անապաստանը հնարաւորութիւն ստացաւ աւարտելու ո՛չ միայն միջնակարգ դպրոցը, այլ և ստանալու բարձրագոյն կրթութիւն:

Բանաստեղծի «Դաշտերը Ժպտում են» առաջին գիրքը լոյս տեսաւ 1925 թուականին, իսկ երկրորդ, ստուար ժողովածուն՝ «Թռիչքը» հրատարակուեց տասը տարի յետոյ: Այնուհետեւ մէկը միւսից ետեւից լոյս տեսան Սարմենի «Երգաստան», «Ատողեր», «Հայրենիք», «Ծաղկունք», «Ծօթը Երջանիկներ», «Սրտի ձայնով», «Հատընտիր», «Գաթաթների կարօտը», «Հայրենի Տուն», «Կարօտի Կրակներ», «Սօսող Ծաղիկներ», «Հայոց Սիրտ» բանաստեղծութիւնների և պոեմների ժողովածուները: Սարմենի բանաստեղծութիւնները հրատարակուել են նաեւ ուսուցիչներին:

Սարմենը քնարերգակ բանաստեղծ է, հոգու բոլոր թելերով կապուած Հայրենիքին: Նրա խօսքը պարզ է, անկեղծ և յուզական: Նա քնարական ջերմութեամբ է ներթողում հայրենի բնութիւնը, հայրենի տունը, սովետական մարդկանց ստեղծարար աշխատանքը, երախաների երջանիկ մանկութիւնը:

Թէեւ արդէն վեց տասնեակ տարիներ է թողել իր թիկունքում, սակայն բանաստեղծը շարունակում է երիտասարդական խանդավառութեամբ ստեղծագործել, գրել նոր բանաստեղծութիւններ ու պոէմներ:

ԱՐՇ. ՍԱՐՈՅԵԱՆ

ԲԱՐԵԳՈՐՆԱԿԱՆԻ ԾՐՋԱՆԱԿԱՐՏ

ԱՆԴԱՄ-ԱՆԴԱՄՈՒՅԻՆՆԵՐԸ



ՕՐ.Ճ Ս. ԳՐԻԴՈՐԵԱՆ
Շրջանաւարտ
Դեղագործական Համալսարանէն:



ՀՐԱՆԳԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ
Շրջանաւարտ
Սմերիբրն Կրթիչ Գոյէնէն



ԱՐՓԻՆԷ ԿԻՒՐԻՆԼԵԱՆ
Լիսէ սը լա Լիպէրթէի
երջանաւարտ օ:

նաւորութիւն մըն է Տիար Ներսէսեան, հակառակ իր հասուն տարիքին և մեծ հաւատք ունի Ամերիկահայութեան տոկալու կամքին և Մայր Հայրենիքին օգտակար ըլլալու վճռականութեանը մասին: Ուրախութեամբ և իրաւացի հպարտութեամբ մը մեզի աւետեց ամերիկահայութեան մէջ տարուած ազգապահպանման աշխատանքի մասին, հետաքրքրական տեղեկութիւններ տալով ազգային եկեղեցական և մշակութային մարզերէն ներս Այսպէս, յայտնեց թէ Տիթրոյիտի մէջ մէկ միլիոն տոլար փոխարժէքով և քաղաքին ամենալաւագոյն մէկ կեդրոնին վրայ բարձրացած է Հայ Մշակութային շէնքը, 1000 հոգի բովանդակող սրահով և յարակից 24 սրահներով, որոնք կ'օգտագործուին 650 Գիրականօրեայ սաներու կողմէ: Ազգային իշխանութեան հսկողութեան ենթարկուած 260 հայ աշակերտներու հայերէնի գասուանդութիւնը եւս կը կատարուի այս սրահներուն մէջ: Գնուած է նաեւ

16 էյքըր (հեկտար) տարածութեամբ և մէկ միլիոն տոլար փոխարժէքով քջանչիլի դիրքով գետին մը, որուն մէկ անկիւնը պիտի կառուցուի Հայկական եկեղեցի մը, հայկական ճարտարապետութեամբ, վասնզի այժմու Ս. Յովհաննէօ Մկրտիչ եկեղեցին շատ փոքր է Տիթրոյիտի նման հոծ հայութիւն մը հաշուող քաղաքի մը համար: Փեռնին փոխարժէքը արդէն վճարուած է: Այդ հողամասին մէկ անկիւնը պիտի տրամադրուի Ամերիկահայ Վեթերաններուն որպէս հաւաքավայր, ուր անոնք պիտի համախմբուին ունենալով այսպէս իրենց կեզրո՞ը:

Հայերէնի դասուանդութիւնները կ'ըլլան մեծ խնամքով ղեկաւարտութեամբ Տիկին Նուարդ Ալիքսանեանի:

Մեր յարգելի հիւրը մեծ գովեստով խօսեցաւ նաեւ Բարեգործականի Ընդհանուր Նախագահ Տիար Ալեք Մանուկեանի մասին, ներբողելով անոր զոհարեցող և հայրենապաշտ ոգին:

Ս.

ՄԷՐԻ ՔԷՇԻՇԵԱՆ



դեռա՞սի երջանաւարտուհի
Մանկապարտէզէն:



ԱՐՍ. ԱՐԹՒՆԵԱՆ

Շրջանաւարտ Գալուսեանի Ե. դասարանէն



ՆՈՐԱՅՐ ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ

Շրջանաւարտ Գալուսեանի Ե. դասարանէն




ՅԱԿՈՐ ՍԵՊՈՒՀԵԱՆ

Շրջանաւարտ Մարտիրոսեան Սէն
Ժօզէժ վարժարանէն Առաջնու-
րիւն ռահեյով:



ԽԱԶԻԿ ԵՍԶՐՃԵԱՆ

Լէօնարսօ Եւ Վիկտոր վարժէն.
Առաջնութեամբ ասարած քէլնիք
գծագիտութեան հիւղը:



ՌՈՒԲԷՆ ԶԱՐԱՐԵԱՆ

Գոլէժ Եր լա Սալը փայլուն կեր-
պով ասարած, այժմ կը հետեւի
համալսարանի գիտական հիւղին:

Վ Ա Ր Պ Ա Տ Ե Տ Բ

Խմբագրութիւնս ուրախութեամբ կ'արձանագրէ հետեւեալ բերկրառիթ ամուսնութիւնները.—

Օր. Էլիզապէթ Պարսամեան
Պր. Գէորգ Գարամանուկեան
4 Յունիս 1961
Աղեքսանդրիա

Օր. Մարկրիթ Կէտէրեան
Պր. Զարեհ Վարդուկեան
25 Յունիս 1961

Օր. Ժողէֆին Գուզեան
Պր. Վազգէն Փարթամեան
16 Յունիս 1961

Օր. Սօնիա Զէրտէլեան
Պր. Օհան Իրատեան
20 Օգոստոս 1961

Օր. Լիւսի Նիկողոսեան
Պր. Լեւոն Մարաշլեան
20 Օգոստոս 1961

Եւ ուրախալի նշանախօսութիւնները.—

Օր. Փոլա Զուլհակեան
Պր. Վահէ Գարահիսարեան
17 Յունիս 1961

Օր. Վիրթորիա Ենիքոմուշեան
Պր. Նուպար Կէրիկեան
1 Յունիս 1961

Օր. Ալիս Քիւրքեան
Պր. Դաւիթ Միրզաեան
8 Յունիս 1961

Օր. Սիրարփի Փոթուկեան
Պր. Անթուան Կարապետեան
5 Օգոստոս 1961

Օր. Ռիթա Աղլաղանեան
Պր. Արթին Պոհնալեան
6 Օգոստոս 1961

Օր. Սոֆի Ունեան
Պր. Լեւոն Նիրթեան
6 Օգոստոս 1961

Օր. Շարէ Մատլէն Պէնտեան
Պր. Բարսեղ Մուրատեան
12 Օգոստոս 1961
Աղեքսադրիա

Օր. Ալիս Յ. Մարգարեան
Պր. Յակոբ Գ. Մազլըմեան
20 Օգոստոս 1961

Մեր սրտազին օնորհաւորութիւնները նորապսակ ամուսնեւուն, խօսեցեալ զոյգեւուն եւ անոնց ազնիւ ծնողաց:

ԽՄԲ.

Ա Տ Ա Ց Ա Ն Ք

ԳԱՀԻՐԷՒ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ
ԵԱԳՈՒՊ - ԱՐԹԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Շնորհակալութեամբ ստացած ենք Տիար Արեակ Ալպոյանեանի վերջին հեղինակութիւնը եղող ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՆՈՒԹԵԱՆ գիրքին Գ. հատրեհն օրինակ մը:

Մամուլի սակ են եւ շուսով շոյս կը սեսենն
Մեծասաղանդ արուեստագէտ ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆԻ
հետեւեալ ԵՐԵՔ քացառիկ հրատարա-
կութիւնները. —

Առաջին — ՄԵԾԱՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ,
Անճահ Պարունեանի գործը.

Պատկերազարդուած Վարպետին կողմէ
10 Գումաւոր եւ 25 Միագոյն նկարներ
150 էջ — ԳԻՆ՝ 250 դահեկան

Երկրորդ — ՄԵՆՔ՝ ՄԵՐ ԱԿՆՈՅՈՎ

Մեր բարեբեկն քաղուած 240 երգիծանկարներով այս
սեղ լիստորը կը պատկերացնէ Մեր ժողովուրդը,
Մեր ակնոցով դիտուած
280 էջ — ԳԻՆ՝ 250 դահեկան

Երրորդ — ՏԵՍ ԽՕՍՔԵՐԴ

Հայերէն 200 ասացուածներ, պատկերի վերածուած
ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆԻ կողմէ.
110 էջերէ կազմուած այս ինքնատիպ եւ զուարեակի
հասորը կ'արժէ 100 դահեկան միայն

Կարելոր — Վերոյիշեալ երեք հատորները միասին
այժմէն զնոոր պիտի

վճարէ միայն 500 դահեկան.

Դիմել հեղինակին — 4, Սերափիս փողոց — Հելիոպոլիս
Արտասահմանի համար 20 % յաւելում:



Այս հրատարակութիւնը վճարովի չէ
Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուերներ, մեր այս
ձեռնարկը աւելի ճոխ եւ օտարեկան բնծայելու համար:
— Ասանալու համար դիմել խմբագրութեան —